AZG NEW PDF.qxd 21/05/2010 22:11 Page 1

Ազգ Azg

22 ՄԱՅԻՍ 2010 ՇԱԲԱԹ 94 (4474)

ISSN: 1829-1651

## Շրջանավարտների տոնախմբություն Հանրապետության հրապարակում



# Եվրոմիության զեկույցը հակասում է ԵՄ Աթենքում ընդունած հայտարարությանը

*Մեկն առանց տարածաշրջան այցելելու զեկույց է գրում, մյուսն էլ «բացարձակ սուտ» է տարածում*

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

«Եվրոմիության Հարավային Կովկասի առնչությամբ զեկույցի Ղարաբաղի հիմնախնդրի վերաբերյալ դրույթները համահունչ չեն ոչ Մադրիդյան սկզբունքներին, ոչ Ակվիլայի հայտարարությանը, ոչ Մոսկվայի հռչակագրին, որոնց մասին հիշատակվում է հենց այդ զեկույցի մեջ», երեկ Արգենտինայի արտգործնախարար **Խորխե Տայանայի** հետ համատեղ ասուլիսում նախօրեին Եվրոխորհրդարանի լիագումար նիստում ընդունված թիվ 2216 բանաձեւում տեղ գտած որոշ դրույթներ այսպես մեկնաբանեց Հայաստանի արտգործնախարար **Էդվարդ Նալբանդյանը**:

«**Ազգը**» երեկ տեղեկացրել էր մանրամասներ Եվրոխորհրդարանում քննարկված այդ զեկույցից, ընդգծելով, որ այնտեղ նշվում է «հայկական ուժերի անհապաղ դուրսբերում Ադրբեջանի օկուպացված տարածքներից»:

«Ակնհայտ խառնաշփոթ է ձեւակերպումների եւ, կարծեմ, պատճառներից մեկն այն է, որ զեկույց գրողը երբեւէ չի եղել Ղարաբաղում, տարածաշրջանում այս զեկույցը գրելիս եւ չի խորհրդակցել անգամ Եվրոմիության անդամ եւ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ Ֆրանսիայի ներկայացուցչի հետ, եւ դրա պատճառով է, որ այս որոշ դրույթները հակասում են նաեւ Եվրոմիության դիրքորոշմանը, որ բազմիցս արտահայտվել է: Եվրոմիության դիրքորոշումը արտահայտվեց 2009 թ. դեկտեմբերին Աթենքում բավականին ընդարձակ հայտարարությամբ, եւ այդ դիրքորոշումը լիովին համահունչ է Հայաստանի տեսակետներին», ասաց Նալբանդյանը:

«**Ազգը**» տեղեկացրել էր, որ զեկույցի հեղինակը բուլղարացի պատգամավոր Եվգենի Կիրիլովն է: «Եվրոպական խորհրդարանը կոչ է անում ակտիվացնել բանակցային գործընթացը, հրաժարվել բոլոր գործողություններից, որոնք ուղղված են ուժով հաստատված եւ միջազգային օրենքներին չհամապատասխանող ստատուս քվոյի պահպանմանը: Կողմերին նաեւ կոչ ենք անում զերծ մնալ 1994 թվականին հաստատված հրադադարի խախտումներից», նշված է Եվրոխորհրդարանի ընդունած բանաձեւում:

Ինչ վերաբերում է հարցին, թե որքանով են ճշմարտացի հայ-թուրքական հաշտեցման նոր ճանապարհային քարտեզի մասին հայտարարությունները, ապա Նալբանդյանը կտրուկ ու կարճ նշեց. «Դա բացարձակ սուտ է, իսկ ստերը չեն պահանջում որեւէ մեկնաբանություն»:

Նշենք, որ խոսքը Թուրքիա-ԱՄՆ բարեկամության խորհրդարանական խմբի նախագահ, «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության արտաքին հարաբերությունների հարցերով փոխպատասխանատու Սուաթ Քընըքլօղլուի մասին է, որը Վաշինգտոնում հայտարարել էր, թե Հայաստանն ու Թուրքիան համաձայնության են եկել միաժամանակ լռություն պահպանել, քանի որ բանակցությունների սեղանին հայտնվել է քննարկման ենթակա նոր նյութ: «Չեմ մանրամասնի, բայց սեղանին հրաշալի մի առաջարկ կա եւ դա ընդունել-չընդունելու հարցը հայերից է կախված», ասել էր Քընըքլօղլուն ԱՄՆ-ի Մերձավոր Արեւելքի ինստիտուտում կազմակերպված «Թուրքիայի դրացիական քաղաքականությունը եւ Մերձավոր Արեւելքը» խորագրով համաժողովում:

**ՀԱԿԱԴԱՐՁ**

## ԱԺ նախագահը նամակ է հղել Եվրոխորհրդարանի նախագահին

**Եվրոխորհրդարանի նախագահ Եժի Բուզեկին ուղղված նամակում երեկ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը հայտնել է իր մտահոգությունները Եվրոպական խորհրդարանի թիվ 2216 բանաձեւի որոշ դրույթների վերաբերյալ. «Բանաձեւի Լեռնային Ղարաբաղի հակամարտության առնչվող մասում առկա 6 կետերից 4-ում (6, 7, 8, 10) կան ձեւակերպումներ, որոնք հակասում են Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի խաղաղ կարգավորման բանակցային գործընթացին, ԵԱՀԿ եւ ԵՄ դիրքորոշումներին, որոնք մանրամասնորեն արտահայտվել են 2009թ. դեկտեմբերին Աթենքում Լեռնային Ղարաբաղին վերաբերող համապատասխան հայտարարություններում, ինչպես նաեւ՝ հենց Եվրոպական խորհրդարանի 1998 թվականից ի վեր ընդունված բանաձեւերին: Դրանք համահունչ չեն մադրիդյան սկզբունքներին, Մոսկվայի հռչակագրին եւ Աքվիլայի հայտարարությանը, որոնց մասին հիշատակվում է բանաձեւում:**

**Բանաձեւի հեղինակ, բուլղարացի պատգամավոր Եվգենի Կիրիլովը երբեւէ առնչություն չի ունեցել Լեռնային Ղարաբաղի խնդրին եւ զեկույցի պատրաստման ընթացքում չի այցելել տարածաշրջան: Նա նաեւ հարկ չի համարել խորհրդակցել բանակցային գործընթացի միջնորդների՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների, մասնավորապես ԵՄ անդամ երկիր Ֆրանսիայի ներկայացուցչի հետ, ինչը Լեռնային Ղարաբաղին վերաբերող ձեւակերպումներում անհանդուրժելի խեղաթյուրումների պատճառներից է: Այս կարգի մոտեցումը վնաս է հասցնում Եվրոպական խորհրդարանի հեղինակությանը եւ լուրջ բացասական ազդեցություն կարող է ունենալ ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման գործընթացի վրա, նշել է Հ. Աբրահամյանը՝ հույս հայտնելով, որ անաչառ եւ հավասարակշիռ մոտեցումներով Եժի Բուզեկի ղեկավարած կառույցը իր նպաստը կարող է բերել տարածաշրջանում կայունության եւ խաղաղության ամրապնդման գործին:**

**Ս. Խ.**

# Վանի Հերոսամարտից մինչեւ ավանդական դաշտահանդես

**ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

Արմենական-Ռամկավար ազատական կուսակցությունը (ՌԱԿ) եւ «Վասպուրական» հայրենակցական միությունն այս տարի համատեղ են կազմակերպել Վանի Հերոսամարտի 95-ամյակին նվիրված մի շարք միջոցառումներ: Այս մասին երեկ «Հայացք» ակումբում՝ ասուլիսի ժամանակ ասացին «Վասպուրական» հայրենակցական միության նախագահ **Գագիկ Բաղդասարյանը** եւ «**Ազգ**» օրաթերթի գլխավոր խմբագիր, Արմենական-ՌԱ կուսակցության ատենապետ **Հակոբ Ավետիքյանը**:

Արմենական կուսակցությունը Վանում ստեղծված առաջին ու միակ կազմակերպությունն է, որը ստեղծվել է հայրենիքում:

«Վասպուրական» միության հետ մեր համատեղ միջոցառումների մեջ ես շատ խորհրդանշական բան եմ տեսնում: «Արմենական» կուսակցությունը, որը հետագայում ՌԱ կուսակցության հիմնական կորիզը դարձավ, այսօր համագործակցում է հայրենակցական մի միության հետ, որը ներկայացնում է Արեւմտյան Հայաստանի մայրաքաղաքը», ասաց Հակոբ Ավետիքյանը եւ հավելեց, որ այս տարի Արմենական կուսակցության ծննդյան 125-ամյակն է, որը նշվում է ամբողջ տարվա ընթացքում, եւ Վանի Հերոսամարտի 95-ամյակը դառնում է հոբելյանական միջոցառումների կարեւոր օղակներից մեկը:

*Տես էջ 3*



# ԱՄՆ-ի քաղաքացիներին խորհուրդ չի տրվում մեկնել Արցախ

**«ԱՄՆ-ի ճանապարհորդող քաղաքացիները ձգձգվող հակամարտության պատճառով պետք է խուսափեն Լեռնային Ղարաբաղ եւ հայկական ու ադրբեջանական զինված ուժերի շփման գծին հարակից տարածքներ ուղեւորություններից», այս մասին ասվում է ԱՄՆ-ի պետքարտուղարության կայքում:**

**Պետքարտուղարությունը այս հայտարարությունն անում է ԼՂՀ-ում խորհրդարանական ընտրությունների նախաշեմին, որտեղ հնարավոր է, որ դիտորդի կարգավիճակով մասնակցեն ամերիկացի քաղաքագետներ, դիվանագետներ կամ լրագրողներ:**

# Հայրենիքում թշնամիներ չեն լինում

**ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**
**Ստեփանակերտ**

**Վաղն Արցախում տեղի կունենան խորհրդարանական ընտրություններ՝ թվով հինգերորդը: Այս ընտրությունների առանձնահատկությունն ամենից առաջ այն է, որ համամասնական ընտրակարգով հատկացված է 17 պատգամավորական տեղ՝ նախկին 11-ի փոխարեն: Գլխավոր ֆավորիտները, ըստ տաբեր հարցումների, երկուսն են՝ «Ազատ հայրենիք» եւ Արցախի ժողովրդավարական կուսակցությունները, թեպետ Հայ հեղափոխական դաշնակցությունը եւս ունի լավագույն հնարավորություններ Ազգային ժողովում առավել պատգամավորական տեղեր ապահովելու համար: Հիշեցնենք, որ քաղաքական այս ուժը նախորդ՝ չորրորդ գումարման Ազգային ժողովում ուներ ընդամենը մեկ մանդատ:**

**Առաջին անգամ, դարձյալ հարցումների արդյունքներով, խորհրդարան մտնելու շանս ունի Արցախի կոմունիստական կուսակցությունը:**

*Տես էջ 2*

# Հայերը Թուրքիայում թուրք-քուրդ բախումներ հրահրելու կարիքը չունեն

*Դրանք արդեն անխուսափելի էին դարձել հայերի բնաջնջումով եւ այդ բնաջնջմանը քրդերի սիրահոժար մասնակցությամբ*

**ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ**

Պրոֆ. Յուսուֆ Հալաչօղլուն Հայոց ցեղասպանության թուրքական ժխտողականության հանրահայտ ջատագովն է: Ոչ պակաս հայտնի են նրա հայատյացության դրսեւորումները: Անկախ ժխտողականության դիրքերի սպառումից, երբ նա Թուրքական պատմական ընկերության նախագահն էր, ի պաշտոնե ժխտողականությունը հիմնավորելու փորձեր էր կատարում: Թեեւ պաշտոնից ազատվելուց հետո ձերբազատվել է նաեւ ժխտողականության հիմնավորման պետական առաջադրանքը կատարելու երանելի պարտականությունից, սակայն նրա ենթագիտակցության մեջ տեղակայված հայատյացությունը հանգիստ չի տալիս, եւ նա պարտավորված շարունակում է հետամուտ լինել հայկական դավադրության որոնումներին:

Խոսքը տվյալ դեպքում Քրդստանի աշխատավորական կուսակցության՝ PKK-ի ղեկավար մարմնին հայկական ծագում վերագրելու Հալաչօղլուի վերջին հայտարարության մասին է: Նա այդ հայտարարությունն արել է մայիսի 19-ին Քոջաելի քաղաքում կազմակերպված գրքի տոնավաճառում: Հալաչօղլուն, թուրքական «Ինտերաժանս» գործակալության վկայությամբ, ասել է. «Արեւմուտքը ի վիճակի չլինելով ռազմական գերազանցության հասնել Օսմանյան կայսրության դեմ, փորձեց պետությունը ներսից քանդել: Իրականում պատմությունը կրկնվում է: Մեր օրերում էլ փորձում են ներքին խառնակչություններ առաջացնել Թուրքիայում: Հրահրում են ալավի-սուննի, թուրք-քուրդ բախումներ, որ խախտվի մեր միասնականությունը»:

Այնուհետեւ նա թուրք-քուրդ բախումների հրահրումը պայմանավորել է PKK-ով եւ նշել է, որ այս կազմակերպության ղեկավար մարմինը կազմված չէ քրդերից, դրա անդամների մեծամասնությունը հայեր են: Ապա Հալաչօղլուն, աղավաղելով ապստամբության իմաստը, ավելացրել է. «Ուզում են թուրք-քրդական ապստամբություն բարձրացնել: Կազմակերպության ղեկավար մարմինը սրանք (հայերն) են կազմում: Այդ իսկ պատճառով էլ միասնականության կարիքն ունենք: Քանի դեռ մենք միասնական ենք, չեն կարող մեզ մասնատել»:

*Տես էջ 8*

# Ո՞վ է Կիրիլովը

## *Խորհրդարանականներն արձագանքում են Եվրոխորհրդարանի բանաձեւին*

Ադրբեջանի «գրավյալ» տարածքներից հայկական զորքերի դուրսբերման կոչով Եվրոխորհրդարանի թիվ 2216 բանաձեւին մեր խորհրդարանականների արձագանքները տարբեր էին: Եղան գնահատականներ եւ բացահայտումներ: Նախ` ո՞վ է բանաձեւի հեղինակ բուլղարացի Եվգենի Կիրիլովը: ԲՀԿ-ական **Նաիրա Զոհրաբյանը** հիշեցրեց, թե ով է Կիրիլովը: «Ադրբեջանի բարեկամներ խմբի» նախաձեռնող եւ նախագահն է, ԵԽԽՎ նախկին անդամ, որը տարիներ շարունակ սնվելով ադրբեջանական լոբբիի կողմից` այնուհետեւ իր նույնաբովանդակ գործունեությունը շարունակել է Եվրոպառլամենտում: Եվրոպառլամենտում բանաձեւերը միայն խորհրդատվական բնույթ ունեն, կատարման համար պարտադիր չեն, իսկ բուլղարացի Եվգենի Կիրիլովի զեկույցի հիման վրա ընդունված 2216 բանաձեւը նախ հակասում է մադրիդյան սկզբունքներին, Եվրոմիության դիրքորոշմանը` ԼՂ հարցով, որը Եվրոմիությունը արտահայտել է 2009 թվականին, Աթենքում: Հակասում է Եվրոմիության առաջընթացի մասին զեկույցին, որը հրապարակվել է 2009 թվականի մայիսի 12-ին, այդ զեկույցի ԼՂ-ի հատվածն ուղղակի որեւէ առնչություն չունի այն բանաձեւի հետ, որն ընդունել է Եվրոպական պառլամենտը. «Ի դեպ` բանաձեւի քննարկման ժամանակ (չեմ ասում` քվեարկության) դահլիճում եղել է ընդամենը 20 պատգամավոր, բոլոր ելույթներին ես տեղյակ եմ, ելույթների ժամանակ հարցեր են տրվել Կիրիլովին, թե ինչո՞ւ նա նման զեկույց ներկայացնելուց առաջ չի հանդիպել համազեկուցողների հետ, ինչո՞ւ նա չի եղել ԼՂ-ում, ինչո՞ւ են նրա առաջադրած դրույթները հակասության մեջ Եվրոհանձնաժողովի դիրքորոշման հետ. որեւէ հստակ պատասխան Կիրիլովը չի տվել, որովհետեւ մեզ համար հասկանալի պատճառով նա «Ադրբեջանի բարեկամներ» խմբի նախաձեռնողն ու պատվավոր նախագահն է, որի գործունեությանը մենք ծանոթ ենք թե՛ Եվրոպայի խորհրդում, թե Եվրոպառլամենտում»: Չնայած, ըստ Զոհրաբյանի, նաեւ բարենպաստ դրույթներ կան Հայաստանի համար` առաջին անգամ չի ֆիքսվում Ադրբեջանի տարածքային ամբողջականության խնդիրը, առաջին անգամ խոսվում է, որ պետք է ԼՂՀ մեկուսացումը կանխվի: Բայց` «նման բանաձեւերը չեն կարող նպաստել հակամարտության կարգավորման գործընթացին»:

Նրա գործընկեր **Արամ Սաֆարյանը** կանխատեսեց, որ Լեռնային Ղարաբաղի բանակցային գործընթացի շուրջը լինելու է դիվանագիտական աշխուժության հետագա մեծացում: Սա միանշանակ բացասական երեւույթ չպետք է ընդունել, քանի որ սա հասկանալի հետաքրքրություն է, որ ունի միջազգային հանրությունը: Բայց եւ զգուշացրեց, որ այս հետաքրքրության պայմաններում Ադրբեջանը Թուրքիայի հետ համագործակցած` օգտագործելու է իր այսպես կոչված «առավելությունները», նկատի ունենք լոբբիինգի հնարավորությունը, ռեսուրսային առավելությունները այս գործում իր ավելացող ազդեցությունն ապահովելու համար: Միաժամանակ, ըստ Սաֆարյանի, աշխուժանալու է նաեւ հակահայկական քարոզչությունը, որի նպատակն է ստվեր գցել հայերի վրա ամեն տեղ, որտեղ հնարավոր է. «Սրա նպատակը մեկն է` Ադրբեջանը պատրաստ չէ Լեռնային Ղարաբաղի կարգավորման հարցում ընդունել փոխադարձաբար ընդունելի զիջումներով համաձայնության գալու տարբերակին: Բանաձեւի մնացած դրույթները որեւէ նոր բան չեն պարունակում, որոնք եղել են մյուս եվրոպական բանաձեւերում»:

ՀՀԿ-ից **Էդուարդ Շարմազանովը** բանաձեւի սխալ կետը խառնաշփոթ առաջացնող եւ անընդունելի համարեց ՀՀԿ-ի համար, որի համար հիմք չկա. «Իրոք կա գրավյալ տարածքների խնդիր, բայց այդ տարածքների խնդիրը վերաբերում է Շահումյանին, Գետաշենին, Մարտակերտի մի մասին, եւ Ադրբեջանն է սկսել իր օկուպացիան, եւ Ադրբեջանը պետք է դուրս բերի իր զորքերը, եթե իրոք ուզում է լինի երկարատեւ խաղաղություն», ասաց նա` հավելելով, որ այդ բանաձեւը իրավական հետեւանք չի կարող ունենալ: Բանաձեւը Կիրիլովի ոչ պրոֆեսիոնալիզմի արդյունքն է, նրա այդ հատվածը (զորքերը դուրս բերելու) հստակ հակասության մեջ է մտնում թե՛ Եվրոմիության հայտարարության, թե՛ ԵԱՀԿ նախարարների հայտարարության, թե՛ եռանախագահող երկրների հայտարարության, եւ թե՛ Մայնդորֆյան հայտարարության հետ:

Ըստ ՀՅԴ-ից **Արծվիկ Մինասյանի**` բանաձեւը ակամա մեզ հիշեցնում է այն հնարավոր զարգացումները, որոնք ասում էր ՀՅԴ-ն հայ-թուրքական արձանագրությունների հետագա ընթացքի մասին խոսելիս: Եվ բնական է, որ թուրք-ադրբեջանական ակտիվ տանդեմի աշխատանքը արտաքին ոլորտում հանգեցրեց նաեւ այսպիսի զեկույցի ընդունմանը, որը թեեւ պարտադիր բնույթ չի կրում, խորհրդատվական փաստաթուղթ է, բայց ընդհանուր տրամադրվածության ձեւավորմանն է միտված, եւ հետեւաբար ակնհայտ է դառնում, որ մեր արտաքին քաղաքականությունը շատ ավելի լուրջ անելիքներ ունի: Թեեւ հայկական կողմը որոշակի աշխատանքներ կատարել էր, բայց դրանք բավարար չեղան, որ կանխվեր այս փաստաթղթի ընդունումը, որի հիմքում թե՛ հայ-թուրքական չարաբաստիկ զարգացման գործընթացն է, թե՛ նաեւ ԼՂ հարցում թուրք-ադրբեջանական ակտիվ դերակատարությունը: Հետագա զարգացումներում, ըստ Մինասյանի, շատ բան նաեւ մեզանից է կախված` թե արտաքին հարաբերություններում ակտիվացնելու ազգանպաստ գործունեությունը հատկապես քարոզչության առումով, նաեւ ԼՂ-ում եւ ազատագրված տարածքներում վերաբնակեցման ծրագրերն իրականացնելու ուղղությամբ: Համարժեք արձագանքի կարիք կա նաեւ:

«Ժառանգությունից» **Լարիսա Ալավերդյանը** եւս անհեթեթ անվանեց բանաձեւը , որը ոչ միայն Ադրբեջանի կողմից խեղաթյուրումների, այլեւ Հայաստանի պասիվության արդյունք է. «Ես չեմ զարմանում, ես զայրանում եմ, որովհետեւ տարիներ շարունակ այս բանաձեւը մի փաստաթղթից գնում է մյուս փաստաթուղթ, մի հաստատությունից մյուսը, եւ Հայաստանը առայժմ չի կարողացել որեւէ համարժեք պատասխան տալ սրան: Ես համարում եմ, որ անելիքը շատ է, եւ չի արվում այսօր այս ուղղությամբ պատշաճ աշխատանք»: Նրա գործընկեր **Ստյոպա Սաֆարյանը** տեղեկացրեց, որ Զարուհի Փոստանջյանի անունից, որպես իրենց ներկայացուցիչ ԵԽԽՎ -ում, նամակներ է ուղարկել ԵԽԽՎ անդամներին եւ ղեկավարությանը. առաջինը վերաբերում է ԼՂՀ-ում կիրակի անցկացվելիք խորհրդարանական ընտրություններին, երեկ էլ արդեն այս բանաձեւի վերաբերյալ նամակն է ուղարկել` եվրոպական արժեքների տեսակետից անթույլատրելի համարելով բանաձեւի ձեւակերպումները:

«Ես բանաձեւին բավական ծանոթ եմ, մենք ունենք բավական հաջողված կետեր, որոնք արտացոլված են զեկույցում, բայց կա նման անհեթեթ բան, որը խոսվել է ներկայացուցիչներից մեկի` բուլղարացի Կիրիլովի կողմից, որն ընդհանրապես ծանոթ չի եղել իրական վիճակին, չի ուսումնասիրել խնդիրը: Նա այն բուլղարացի պատգամավորներից է, որը Բուլղարիայում Հայոց ցեղասպանության խնդրի հետ կապված միշտ դեմ է խոսել եւ դեմ է քվեարկել: Նա ուղղակի` առանց ուսումնասիրելու, առանց իմանալու խնդրի ամբողջությունը, ուղղակի իր սուբյեկտիվ, անհեթեթ մոտեցումն է ցուցաբերել, եւ ես կարծում եմ` սա չպետք է հետեւանքներ ունենա»,- սա ՕԵԿ պատգամավոր **Հեղինե Բիշարյանի** տեսակետն է:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

# Հայաստանի երեխաների 26 տոկոսն աղքատ է

ՀՀ Ազգային ժողովի եւ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի 2009 թ. հուլիսի 7-ին ստորագրված փոխըմբռնման հուշագրի շրջանակներում ԱԺ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովը եւ UNICEF-ը մայիսի 21-ին կազմակերպել էին «Մանկական աղքատությունը Հայաստանում» թեմայով ընդլայնված քննարկում: Քննարկումներին մասնակցում էին ԱԺ պատգամավորներ, ՀՀ կառավարության, միջազգային եւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Բացման խոսքով հանդես եկավ ԱԺ նախագահի տեղակալ **Արեւիկ Պետրոսյանը**, ելույթներով հանդես եկան ԱԺ սոցիալական հարցերի հանձնաժողովի նախագահ **Հակոբ Հակոբյանը**, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի տնօրեն **Լեյլի Մոշիրին**, իսկ հիմնական զեկուցողն էր Նյու Յորքի համալսարանի պրոֆեսոր **Ջոնաթան Բրեդշոուն**, ում ղեկավարությամբ «Մանկական աղքատությունը Հայաստանում» թեմայով զեկույց է պատրաստվել:

Հայաստանում երեխաների 26 տոկոսն աղքատ է, որից 3 տոկոսը ապրում է ծայրահեղ աղքատ: 2004 թվականից որոշակի առաջընթաց է արձանագրվել մանկական աղքատության ցուցանիշների նվազեցման գործում` 38 տոկոսից հասնելով 26-ի: Ըստ բանախոսի` երեխայի աղքատ լինելու ռիսկն ավելի բարձր է, եթե նա ապրում է բազմազավակ ընտանիքում, ծնողները միջնակարգ կամ ավելի ցածր կրթություն ունեն, ծնողները կամ չափահաս անդամները գործազուրկ են, եթե ընտանիքում կան հաշմանդամ երեխաներ կամ ծնողները ամուսնալուծված են: Հայաստանում հաշմանդամ երեխաները բոլոր աղքատ երեխաների 50 տոկոսն են կազմում:

Բոլոր երեխաների 24 տոկոսը ապրում է ամսական ընտանեկան նպաստ ստացող ընտանիքներում: 2010 թ. տվյալներով` Հայաստանում ընտանեկան նպաստի ամսական միջին գումարը կազմում է 23 հազ. դրամ, որը շատ կարեւոր է ծայրահեղ աղքատ ընտանիքի համար: Մ. Խ.

ԲԱՑՎԵՑ ԵՐԵՎԱՆՈՒՄ ԱՐԳԵՆՏԻՆԱՅԻ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆԸ

# Արգենտինա. ԼՂ հարցում խաղաղ լուծումը միակ ճանապարհն է

Հայ-արգենտինական հարաբերությունները նոր փուլ են թեւակոխում, դա է վկայում նախարար **Խորխե Տայանայի** մասնակցությամբ Հայաստանում Արգենտինայի դեսպանատան բացումը: Իր գործընկերոջ` Արգենտինայի ԱԳ նախարար Խորխե Տայանայի հետ համատեղ ասուլիսում երեկ հայտարարեց Հայաստանի ԱԳ նախարար **Էդվարդ Նալբանդյանը**:

Արգենտինացի դիվանագետն իր հերթին նշեց, որ հայկական համայնքը` ավելի քան 100 հզ. հայեր, Արգենտինայում ակտիվ մասնակցություն ունի երկրի կյանքում: Նախարարը հիշատակեց, որ հաջորդ շաբաթ Արգենտինան նշում է պետության 200-ամյակը` հպարտ հայերի աջակցությամբ ու ներդրմամբ կյանքի տարբեր ոլորտներում:

Թե ինչպես է Արգենտինան վերաբերվում ԼՂ հարցին, նախարարը արձագանքեց, որ իր երկիրը հավասարակշիռ մոտեցում ունի այդ հարցում, ընդգծմամբ, որ հակամարտության լուծման միակ ճանապարհը խաղաղ միջոցներն են: «Ես հասկանում եմ, որ Հայաստանը եւս այս դիրքորոշմանն է», ասաց Խորխե Տայանան:

Խորխե Տայանան Արգենտինայի արտաքին քաղաքականության մասին դասախոսությամբ հանդես է եկել ԱԳՆ դիվանագիտական ակադեմիայում: Նա այցելել է նաեւ Ծիծեռնակաբերդ, ուր ծաղկեպսակ է դրել Մեծ եղեռնի զոհերի հուշարձանին: Ա. Հ.




# Հայրենիքում թշնամիներ չեն լինում

1-ին էջից

Թե ինչպիսին կլինեն ընտրությունների իրական արդյունքները, պարզ կդառնա կիրակի օրը, իսկ բուն քարոզարշավի ընթացքը թերեւս կարելի է գնահատել իբրեւ ԼՂՀ խորհրդարանական ընտրությունների պատմության ողջ ընթացքում ամենախաղաղը, որովհետեւ այն ընթացել է հնարավորինս կոռեկտության պայմաններում: Չեն արձանագրվել ընտրապայքարի այն որոշ սուր դրսեւորումները, որոնք բնորոշ էին անցած ընտրություններին: Դա նշանակում է նաեւ, որ հաջորդ գումարման խորհրդարանում պատգամավորական խմբակցությունների խաղաղ գոյակցություն է լինելու` կուսակցությունների կողմից դեռեւս 2007-ին հավանության արժանացած` ԼՂՀ նախագահի նախընտրական ծրագրի շուրջ համախմբվածությամբ:

ԼՂՀ անկախության ժամանակահատվածում անցկացված բոլոր մակարդակների ընտրություններն էլ աչքի են ընկել ժողովրդավարական չափանիշներին համապատասխանությամբ, ինչը յուրաքանչյուր անգամ հաստատել են միջազգային դիտորդները: Այս անգամ էլ բացառություն չի լինի: Ինչ մնում է վերջին օրերի թուրք-ազերական բացասական արձագանքներին, ապա դրան կարելի է ուշադրություն չդարձնել թեկուզ այն պարզ բացատրությամբ, որ Ստեփանակերտ ժամանած ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները ոչ մի անգամ կասկածի տակ չեն առել Ղարաբաղում ընտրությունների արդյունքներով ձեւավորված իշխանությունների լեգիտիմությունը: Նրանք պարբերաբար հանդիպել են ԼՂՀ ղեկավարության հետ, մասնավորապես նաեւ խորհրդարանականների հետ` հենց պառլամենտի շենքում: Եվ սա այն կարեւոր գնահատականն է, որ փաստացի տրվել ու տրվում է ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության լուծմամբ շահագրգիռ միջնորդների կողմից:

Խորհրդարանական ընտրությունները հերթական քայլն են հանդիսանալու ԼՂՀ-ում ժողովրդավարության ամրապնդման ուղղությամբ: Անկախ այն բանից, թե քաղաքական ո՞ր ուժերն են հաղթելու ընտրապայքարում` շահողը ժողովուրդն է լինելու: Ղարաբաղում համընդունելի է թեւավոր դարձած այն միտքը, ըստ որի` հայրենիքում թշնամիներ չեն լինում: Դա ուսուցանել է սեփական պատմությունը, հատկապես վերջին 20 տարում:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW PDF.qxd 21/05/2010 21:03 Page 1



# Պատրիկ Դեւեջյան. «Հայ-թուրքական հարաբերություններ` առանց նախապայմանների»

Ֆրանսիայի Օ՛դը Սենի նահանգի եւ «Հայաստան» համահայկական հիմնադրամի համագործակցությունն ունի երկու տարվա պատմություն: «Օ՛դը Սեն նահանգը` Տավուշին» պայմանական խորագիրը կրող բարեգործական միջոցառումների նպատակն է Տավուշի մարզում կյանքի կոչել բազմաթիվ ծրագրեր: Ֆրանսիայի տնտեսական զարգացման նախարար, Օ դը Սենի նահանգային խորհրդի նախագահ **Պատրիկ Դեւեջյանի** բնութագրմամբ` նահանգի եւ հիմնադրամի համագործակցությունը Հայաստանի եւ Ֆրանսիայի բարեկամական հարաբերությունների ամրությունը հաստատող եւս մեկ ապացույց է: «Հայաստան» հիմնադրամի գործադիր տնօրեն **Արա Վարդանյանն** էլ նկատում է, որ բարեկամությունը հանդիսացավ գեղեցիկ օրինակ, որպեսզի մի շարք այլ նահանգներ համագործակցության ցանկություն հայտնեն:



Օ՛դը Սենի գլխավոր խորհրդի որոշմամբ յուրաքանչյուր տարի 500.000 եվրո գումար կհատկացվի Տավուշում զարգացման ծրագրերի իրականացմանը: Մարզի ընտրությունը պատահական չէ. հենվել են ՄԱԿ-ի վիճակագրական տվյալների վրա: Պատրիկ Դեւեջյանը նկատում է, որ սովորաբար մայրաքաղաքային հասարակությունը գտնվում է կենսական ավելի բարձր մակարդակի վրա, մինչդեռ քաղաքից հեռու շրջաններն ունեն զարգացման ցածր մակարդակը: Այս առումով Հայաստանը բացառություն չէ: «Մեր նպատակն է մարզերում ապրող մարդկանց աջակցել, ինչը կնվազեցնի միգրացիոն հոսքը, եւ հայրենիքը լքելու գաղափարը չի դառնա արդիական», ասում է նա:

Հիմնադրամի հետ իրականացրած ամենախոշոր նախագիծը ոռոգման ծրագիրն է: Նախատեսվում է վերակառուցել Այգեհովիտ-Վազաշեն ջրանցքը, տնկարաններ, ջերմոցներ եւ գյուղատնտեսական սարքավորման բազաներ հիմնելու նախագծերը նույնպես օրակարգում են:

Նահանգի եւ հիմնադրամի համագործակցության առաջին պտուղը 15 կմ երկարությամբ հայ-ֆրանսիական բարեկամության անունը կրող ջրանցքն է, որի շնորհիվ Տավուշի մարզի Խաշթառակ, Լուսահովիտ, Դիտավան համայնքների շուրջ 600 հեկտար հող կոռոգվի: Բացման արարողությունը տեղի կունենա այսօր` մասնակցությամբ Պատրիկ Դեւեջյանի, ՀՀ փոխվարչապետ Արմեն Գեւորգյանի, Արա Վարդանյանի, հիմնադրամի Ֆրանսիայի տեղական մարմնի ատենապետ, հոգաբարձուների խորհրդի անդամ Պետրոս Թերզյանի:

«Հայաստան այցելության նպատակն է տեսնել, թե նվիրատվություններով ինչ աշխատանք է իրականացվել: Վստահ եմ եւ չեմ կասկածում հիմնադրամին, սակայն հաշվետու եմ գլխավոր խորհրդին: Ոռոգման հետ կապված ծրագրերի ավարտից հետո կներգրավվենք գյուղատնտեսության զարգացմանը նվիրված այլ նախաձեռնություններում», ասաց Դեւեջյանը:

Թեպետ Դեւեջյանը վերջին անգամ Հայաստան էր ժամանել 3 տարի առաջ, սակայն խոսելով տպավորությունների մասին` հիշում է 90-ականների երեւանյան պատկերն ու մարդկանց կենսակերպը: «Չեմ ուզում ձեզ հիշեցնել, դուք էլ լավ գիտեք, թե Հայաստանն ինչպիսի տպավորություն էր թողնում 90-ականների սկզբներին», ասում է նա` հավելելով, որ այսօր երկրում զարգացումն ու բարգավաճումն ակնառու են: Մտահոգում է, որ Հայաստանը շարունակում է ֆինանսական ճգնաժամի ազդեցության տակ մնալ. բազմաթիվ շինարարական հրապարակներում դադարեցվել են աշխատանքները: Սակայն հայի տեսակի հետ կապված հույսերը մեծ են: «Վստահ եմ հայերի ձեռներեցությանն ու չեմ կասկածում, որ հայի նախաձեռնող բնավորությունն այս անգամ էլ կարդարացնի»:

«Սփյուռքը զգայուն հայացքով է հետեւում Հայաստանի կյանքին», Հայաստան-Սփյուռք կապերի մասին խոսելով ասաց նա` հավելելով, որ կապերը շատ կարեւոր են երկու կողմերի համար: Իրեն համարելով Սփյուռքի մասնիկ` դիվանագիտական բարձր հմտությամբ Պատրիկ Դեւեջյանը խուսափեց կառավարության գործունեության վերաբերյալ կարծիք արտահայտել: Պատճառը մեկն է` «Քվե տալու իրավունք չունեմ»: Կարծիք արտահայտել չի ցանկանում, սակայն ուշադրությամբ հետեւում է իրադարձությունների զարգացմանը եւ ունի իր գնահատականը: Դրանք մասնավոր են եւ հրապարակման ոչ ենթակա:

Հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ տեսակետն էլ, իր խոսքերով, մասնավորների շարքից էր: «Եթե թուրքերը մեզ հետ խոսում են նախապայմանների լեզվով, չպետք է նրանց հետ բանակցենք: Երեք անգամ կրկնում եմ` հայ-թուրքական հարաբերություններ` առանց նախապայմանների»:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# «Ղարաքիլիսայի, Սարդարապատի, Բաշ-Ապարանի հերոսամարտերից հետո հայ ժողովուրդը նվաճեց պետություն ունենալու իր իրավունքը»

**1918 թվականի մայիսյան հերոսամարտերը թուրքական բանակի գեներալ Վեհիբ փաշային ստիպեցին խոստովանել. «Հայերն ապացուցեցին, որ իրենք աշխարհի լավագույն զինվորներն են»: Եղեռն տեսած, առաջին աշխարհամարտի սարսափները վերապրած, Արեւմտյան Հայաստանը կորցրած հայ ժողովուրդը ստիպված էր միայնակ պայքարել թուրքերի մի քանի անգամ մեծ զորքի դեմ: Մայիսի 22-28-ը հայ զինվորները աշխարհազորայինների աջակցությամբ կարողացան կասեցնել թուրքերի առաջխաղացումը: Թուրքերին այլ ելք չէր մնում, քան ընդունել պանթուրքիզմի տապալումը եւ ճանաչել Հայաստանի առաջին հանրապետությունը:**

**«Ղարաքիլիսայի, Սարդարապատի, Բաշ-Ապարանի հերոսամարտերից հետո հայ ժողովուրդը նվաճեց պետություն ունենալու իր իրավունքը: Չլինեին հերոսամարտերը, չէին լինի առաջին, երկրորդ եւ երրորդ հանրապետությունները», «Հենարան» ակումբում երեկ ասաց պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Բաբկեն Հարությունյանը:**

**Համաժողովրդական կամքով դիկտատոր հռչակված Արամ Մանուկյանը եւ նրա գլխավորած Հատուկ կոմիտեի անդամները կարողացան ոչ միայն ոգեւորել հուսալքված ժողովրդին, այլեւ նրանց մեջ արթնացնել մարտնչելու եւ պայքարելու ցանկությունը: Մինչ հաղթանակների գրանցումը մեծ էր դասալիքների եւ խռովարարների թիվը: «Առաջին հաղթանակից հետո կամավորները գալիս էին իրենց սնունդով եւ գնում կռվելու: Սա իսկապես համաժողովրդական պայքար էր: Հայերն արյունով գծեցին իրենց սահմանը, ի տարբերություն այսօր իրենց ադրբեջանցիներ հորջորջող կովկասյան թաթարների, որոնք սկուտեղի վրա ստացան անկախությունը», ասաց Ազգային արխիվի փոխտնօրեն Էդգար Հովհաննիսյանը:**

**Ռազմարվեստի պատմաբան Սուրեն Մարտիկյանը գիտականորեն կարողանում է բացատրել, թե ինչու հենց մայիս ամսին են բաժին ընկել մեր պատմության կարեւորագույն հաղթանակները, բայց եւ կարեւորում է զինվորի ոգեւորությունն ու բազկի զորությունը: «Սովորաբար, ելնելով մեր լեռնաշխարհի կլիմայական առանձնահատկությունից, զորքին հանգիստ էին տալիս աշնան վերջից եւ պատերազմական գործողությունները վերսկսում ապրիլի վերջին: Այնուամենայնիվ, մայիսյան հերոսամարտերին մենք կարողացանք ոչ միայն հաղթել, այլեւ ստիպել թշնամուն հարգել մեզ», ասաց Սուրեն Մարտիկյանը:**

**Ազգային արխիվում այսօր պահպանվում են հարյուրավոր փաստաթղթեր, որոնց շնորհիվ հնարավոր է դրվագ առ դրվագ վերականգնել պատմական հաղթանակների իրողությունները:**

**«1918 թվականին հնարավոր չէր ամբողջությամբ գիտակցել այդ հաղթանակների արժեքն ու նշանակությունը: Բայց տասնամյակների հեռավորությունից գնահատելու դեպքում պարզ է դառնում, որ դրանք իսկապես դարակազմիկ իրողություններ էին: Հայ ժողովուրդը կարողացավ ապացուցել եւ վերահաստատել պետություն ունենալու իր իրավունքը», նկատեց Բաբկեն Հարությունյանը:**

ԱՐԵՎԻԿ ԲԱԴԱԼՅԱՆ

# Շնորհակալիք

Խորապես զգացված եմ եւ շնորհակալություն եմ հայտնում մայրիկիս մահվան կապակցությամբ հղած ցավակցությունների, վշտակցության եւ մխիթարանքի խոսքերի համար:

Էդվարդ Նալբանդյան

# Վանի Հերոսամարտից մինչեւ ավանդական դաշտահանդես

*1-ին էջից*

Գ. Բաղդասարյանի փոխանցմամբ` «Վասպուրականն» առաջին հայրենակցական միություններից է, այն այսօր կապ ունի ԱՄՆ-ի, Ֆրանսիայի եւ այլ երկրների «Վասպուրական» հայրենակցական միությունների հետ:

Արմենականները եղել են նաեւ 1896 թվականի Վանի ինքնապաշտպանության կազմակերպիչները: Եվ «1896 թվականի համախումբ լինելու փորձառությունը կազմեց այն հիմքը, որը հետագայում` 1915 թ. փրկեց Վասպուրականի ժողովրդին: Հատկապես ռամկավարների ու դաշնակցականների համագործակցության արդյունքում մենք, իսկապես, ունեցանք հերոսամարտ», նշեց Հ. Ավետիքյանը:

Վանի ինքնապաշտպանական կռիվների շնորհիվ թուրքական յաթաղանից փրկվեց շուրջ 200 հազար հայ, նշեց Գ. Բաղդասարյանը: Նրանց մեծ մասը գաղթեց ու հանգրվանեց Հայաստանի այժմյան տարածքում: Քաղաքի ողջ բնակչության միասնական պայքարը ղեկավարում էին Արամ Մանուկյանն ու Արմենակ Եկարյանը:

Վանի Հերոսամարտին նվիրված միջոցառումների մեկնարկը եղել է ապրիլի վերջին, երբ Ժողովրդական արվեստի թանգարանում կազմակերպվել էր «Վանը կորցրել ենք, սակայն Վանի մշակույթը չենք կորցնի» խորագրով միջոցառումը, որի ժամանակ ներկայացվեցին Վանի մշակույթն ու մի վավերագրական ֆիլմ, որը պատմում էր, թե Վանի մշակույթն ինչ շարունակություն է ունենում Հայաստանի Հանրապետությունում:

**Գագիկ Բաղդասարյանը** տեղեկացրեց նաեւ, որ այսօր «Վասպուրական» պուրակում կազմակերպվելու է ծառատունկ:

Իսկ ժամը 15.00-ին էլ լինելու է հանդիսավոր նիստ, որին մասնակցելու են ինչպես Արմենական կուսակցության ներկայացուցիչները վանեցիների ժառանգների հետ, այնպես էլ մյուս կուսակցությունների ներկայացուցիչները, ինչը, ըստ Գագիկ Բաղդասարյանի, խորհրդանշական քայլ է, որովհետեւ Վանի ինքնապաշտպանության ժամանակ միավորվել էին բոլոր կուսակցությունները` մի կողմ դնելով տարաձայնությունները:

Հանդիսավոր նիստը լինելու է Առնո Բաբաջանյանի անվան համերգասրահում (Աբովյան 1), այնուհետեւ վասպուրականցիներն Արմենական-ՌԱ կուսակցության հետ մայիսի 23-ին` ժամը 12. 00-ին «Արծիվ Վասպուրականի» հուշարձանի մոտ (Աշտարակից Գյումրի տանող ճանապարհին) կազմակերպելու են Վանի Հերոսամարտին նվիրված դաշտահանդես, որն արդեն ավանդական է դարձել:

Ավանդական դաշտահանդեսին կարող են մասնակցել բոլոր ցանկացողները, առավոտյան ժամը 11.00-ին ավտոբուսները կշարժվեն Հանրապետության հրապարակից:

Միջոցառումների շարքը կավարտվի հունիսի սկզբին «Շխոնց Միհրան» ներկայացումով, որը բեմադրվելու է Համազգային թատրոնում:

«Երբ այսօր կարդում ու ֆիլմեր ենք դիտում Մեծ Եղեռնի մասին, մեզ թվում է` մեր ժողովուրդը գնացել ու խեղդվել կոտորվել է, ու չի եղել ոչ մի հիմնական դիմադրություն, եւ ցավոք, մեր մեջ ամրացնում է զոհի հոգեբանությունը », ասաց Հակոբ Ավետիքյանը եւ ընդգծեց. «Որտեղ եղել է համախմբված եւ կազմակերպ ուժ, եղել է նաեւ ինքնապաշտպանություն»:

Բանախոսների կարծիքով` Վանի Հերոսամարտի 95-րդ տարելիցը լավագույն առիթ է, որպեսզի մեր ժողովուրդը հիշի ու փառաբանի այն հերոսներին, որոնք բազմաթիվ մարդկանց կյանք են փրկել:

«Զարմանում եմ , որ այս ամբողջը չի նշվում պետականորեն: Մեր մայրաքաղաքում Վանի Հերոսամարտի կազմակերպիչների անուններով փողոցներ կամ հրապարակներ դեռեւս չկան», ասաց Հ. Ավետիքյանը:

# «Լեռնային Ղարաբաղ. ինչպես է դա եղել...»

**«Մենք քարոզչական ճակատում շատ անելիքներ ունենք: Չունենալով բավականաչափ հավաստի, արժանահավատ փաստերի պաշար, Բաքուն, այնուամենայնիվ, կեղծիքի հիմքի վրա առաջ է տանում իր քարոզչությունը եւ գործից անտեղյակ լսարանում սովորաբար հաղթանակ է տանում: Այդ ռազմավարության դեմ կա միայն մեկ զենք` ճշմարտությունը եւ այդ ճշմարտության իմացությունն ու տարածումը: Իսկ մեր հասարակության լայն շրջանակները բոլորովին էլ բավարար գիտելիքներ չունեն ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացի վերաբերյալ: Գալիս է բանից անտեղյակ մի սերունդ: Խնդիրը կարող ենք լուծել մեծ նախագծի շրջանակներում, որի առաջին քայլերն անում է ՀՀ նախագահի աշխատակազմի հանրային կապերի եւ տեղեկատվության կենտրոնը, որի նախաձեռնությամբ ու օժանդակությամբ էլ հրատարակվել է այս գիրքը` «Լեռնային Ղարաբաղ. ինչպես է դա եղել...» , երեկ գրքի շնորհանդեսի ժամանակ ասաց հեղինակ, Երեւանի պետական համալսարանի պրոֆեսոր Ալեքսանդր Մանասյանը:**

**Այս գրքի նպատակն է պատմական, իրավական եւ փաստական օբյեկտիվ նյութերի, աղբյուրների հիմքով ներկայացնել ղարաբաղյան հակամարտության նախապատմությունը, նրա ձեւավորման արմատներն ու հիմքերը, ներկա հանգրվանը, մանրակրկիտ դիտարկել այդ շրջանում տեղի ունեցած մի շարք իրադարձություններ` մասնավորապես Սումգայիթում ու Բաքվում կատարված ոճրագործությունները, Մարաղայի ցեղասպանությունը, ադրբեջանաբնակ հայ ազգաբնակչության դեմ իրագործված մի շարք այլ հանցագործություններ:**

**ՀՀ նախագահի աշխատակազմի հանրային կապերի եւ տեղեկատվության կենտրոնի փորձագետ, գրքի խմբագիր ու կոորդինատոր Ալեն Ղեւոնդյանն ասաց, որ գրքում ներկայացված են այն փաստաթղթերի բնօրինակների պատճենները, որոնք փաստում են ԼՂ-ի` ՀՀ-ին պատկանելության իրավականորեն հիմնավոր դրույթները, ինչպես նաեւ` Ադրբեջանի կազմ ներառելու անօրինականության իրավապատմական փաստարկները: Նա նաեւ հայտնեց, որ գիրքը թարգմանվելու է բազմաթիվ օտար լեզուներով, այդ թվում` ասիական:**

**Հիշեցնենք, որ ՀՀ նախագահի աշխատակազմի հանրային կապերի եւ տեղեկատվության կենտրոնի աջակցությամբ կյանքի է կոչվում նաեւ «Սովորական ցեղասպանություն» նախագիծը: Շարքի փաստագրական ֆիլմերից են` «Բաքու, հունվար, 1990», «Սումգայիթ, փետրվար, 1988»:**

**«Արդեն տեւական ժամանակ է, որ կենտրոնը իրականացնում է հետեւողական գործունեություն` քարոզչական, պատմական, քաղաքագիտորեն գրագետ վերլուծությունների դաշտում: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հակամարտության խնդիրը մեր գերակա ուղղություններից մեկն է», ասաց Ղեւոնդյանը:**

Հ. Ա.

# Ճանաչողական

### Արմենական-125

# Վանից դեպի Խանասոր...

## *Հայոց ռազմական տարեգրության հերոսական էջ*

Հայոց ինքնապաշտպանական մարտերի տարեգրության մեջ բացառիկ տեղ է գրավում խանասորյան ռազմերթը, որն իրականացրին Վանի ինքնապաշտպանության մարտիկներն ու մասնակիցները:

Վանի 1816 թ. մեկշաբաթյա ինքնապաշտպանությունից հետո, օտարերկրյա հյուպատոսների երաշխավորությամբ, հայկական ինքնապաշտպանական խմբերը պատրաստվեցին դուրս գալ երկրից: Դեռեւս հունիսի 8-ին (1896 թ.) Վանի Զինվորական մարմնի հրամանի համաձայն, ինքնապաշտպանական խմբերը թողնելով իրենց դիրքերը, շարժվում են դեպի Վարագա վանքը: Անպաշտպան քաղաքը մատնվում է թուրք եւ քուրդ հրոսակների ավարառությանն ու հրկիզմանը:

Վարագա վանքի շրջակայքում հավաքվում են շուրջ հազար զինված եւ մի քանի հարյուր անզեն երիտասարդներ: Տեղի ունեցած միջկուսակցական ժողովից որոշվում է, որ բոլորը միասին մի ուղղությամբ են առաջ շարժվելու: Հնչակյան մարտիկները Մարտիկի առաջնորդությամբ առաջապահներ են ընտրվում, դաշնակցականները Պետոյի գլխավորությամբ՝ «բոլորի թիկունքից գնալու», իսկ արմենական զինվածները՝ «Մ. Ավետիսյանի եւ Մուշեղի գլխավորությամբ՝ անզեններին երկու կողմից պաշտպանելու»:

Վարագը դեռեւս շեն էր: Պատարագ է մատուցվում: Ապա յուրաքանչյուր մարտիկ վերցնում է ճանապարհի համար անհրաժեշտ հաց ու մթերքներ: Սակայն հաջորդ օրը Պետոն առաջարկում է անզեն երիտասարդներին հետ դառնալ քաղաք: Բայց անզենները ոչ մի կերպ չուզեցին վերադառնալ Վան, մանավանդ արդեն հայտնի դարձավ, որ Բողոքական շրջանակի մեջ ապաստանածներն անգլիական հյուպատոսի մտրակի հարվածներով դուրս էին հանված եւ հանձնված թուրք-քուրդ խուժանի ողորմածությանը: Մ. Ավետիսյանը ստիպված է լինում բոլոր անզեններին իր խմբում վերցնել, նշանակում է դրոշակավորներ, առաջապահներ եւ վերջապահներ: Այսպես, արմենականների խումբը պաշտպանական անհրաժեշտ մարտակարգ ընդունելով, բռնեց նահանջի ճանապարհը: Իսկ Պետոյի եւ Մարտիկի առաջնորդությամբ հնչակյան եւ դաշնակցական խմբերն արմենականների հեռանալուց մի քանի օր անց նույնպես որոշում են նահանջել դեպի պարսկական սահմանագլուխը: Սակայն երկու խմբերն էլ նահանջի հենց սկզբից հետապնդվեցին թուրքական զինվորական ուժի եւ քրդական խաժամուժի կողմից:

Վանի առժամյա կուսակալ Սաաէդդին փաշան խնամքով նախապատրաստել էր նահանջող խմբերի շրջապատումն ու ոչնչացումը: Գործնականում իրենց հավաստիացումներին ոչնչով տեր չկանգնեցին նաեւ եվրոպական հյուպատոսները, որոնք երաշխավոր էին հայոց խմբերի անվտանգ անցման համար:

Մ. Ավետիսյանի գլխավորած արմենական խումբը ճանապարհի հենց սկզբից մշտապես եւ անընդհատ ենթարկվում է թշնամու հարձակումներին:

Խմբի տեղաշարժերը (ցերեկը թե գիշերը) աչալուրջ հսկում էին թուրքական հրամանատարությունը եւ տեղական իշխանությունները: Խմբի վրա հարձակումներ էին լինում թուրքական կամ քրդաբնակ գյուղերի կողքով անցնելիս: Նորգյուղի մոտ հայոց զինյալ ուժը թեթեւ ընդհարումից հետո փախուստի է մատնում թալանից վերադարձող քրդերի ստվար խմբին: Խումբը հասնում է Հնդստան հայաբնակ գյուղը, որը փառահեղ ընդունելություն է ցույց տալիս Ավետիսյանին ու իր փառապանծ մարտիկներին: Այս գյուղում զինվորները փոքր-ինչ հանգստանում են, ապա վաղ առավոտյան շարունակում ճանապարհը Աբաղայի դաշտով դեպի պարսկական սահմանագլուխը: Գիշերն անգամ ստիպված էին շարունակել ծանր, տառապալից երթը: Սկսված կարկտախառն անձրեւն ու խայթող ցուրտն առավել տաժանելի են դարձնում այն: Թեեւ խմբի անդամներին արգելված էր կրակ վառել, սակայն սաստիկ ցուրտը ստիպեց մարտիկներին ճանապարհի փշերից ու չորուկ ճյուղերից կրակ սարքել: Հետապնդող թուրքական զինուժը նկատում է կրակը եւ փորձում պաշարման օղակում գցել հայ զինյալներին Գյուզել-Դարայում: Նշված վայրում տեղի ունեցած ծանր ընդհարման ժամանակ խումբը տալիս է զգալի զոհեր: Այդ զոհերը պատճառ են դառնում մարտական կորովի անկման, քառասուներկու հոգի Ասքանազ Չթչյանի գլխավորությամբ անջատվում են հիմնական խմբից եւ վերադառնում Վան:

Ավետիսյանը նորից վերադառնում է խմբի մարտաշարքերը եւ Մուշեղ Թանգարաճյանին նշանակում է առաջապահների հրամանատար:

Հերիսան գյուղի բլրակների վրա կրկին ծանր մարտեր են կայանում:

Բազմաթիվ այս կարգի ընդհարումներից եւ մարտերից խումբը մտնում է Խանասորի դաշտ, որտեղ գտնվում էր Բարդուղեմեոս առաքյալի հինավուրց վանքը: Թեեւ հայ մարտիկները կտրել էին հեռագրաթելերը, սակայն թուրքական իշխանությունները կողմնակի եւ գաղտնի միջոցներով վերականգնել էին դրանք, որն էլ հնարավորություն էր ընձեռում վերահսկելու իրադրությունը գրեթե ամբողջությամբ:

Շատ շուտով արմենականները շրջապատվում են ամեն կողմից Խանասորի դաշտ խուժող քրդական հրոսակախմբերով, որոնց գլխավորում էր քուրդ հայտնի ավազակապետ Շարաֆ բեկը:

Խանասորի դաշտում տեղի է ունենում այս երկարատեւ ռազմերթի վերջին արարը: Ուժերը թեեւ խիստ անհավասար էին, սակայն հայ մարտիկների հաջագործություններն ապշեցնում էին թշնամուն: Փամփուշտները սպառվելուց հետո հայորդիները դիմում էին ձեռնամարտի: Խանասորի մարտը վերջինն է լինում հարյուրավոր արմենականների համար: Միայն մի քանիսին է հաջողվում ճեղքել պաշարման օղակն ու անցնել Պարսկաստան: Թուրքական իշխանությունները նախազգուշական բոլոր միջոցները գործադրել էին, որ պարսկական սահմանակողմից հայոց որեւէ օգնական ուժ չկարողանար հասնել ու միանալ Խանասորի դաշտում մարտնչող հայորդիներին: Քրդերը հրաման էին ստացել կենդանի բռնել Մ. Ավետիսյանին, սակայն խիզախ առաջնորդը մարտնչում է մինչեւ արյան վերջին կաթիլը: Ականատեսների վկայությամբ՝ Մ. Ավետիսյանը հնարավորություն ուներ լողալով անցնելու Զաբ գետը եւ ազատվելու, բայց չուզեց այդ նվաստ անունը վաստակել՝ ի փրկություն յուր կյանքի: Հետագայում նրա դիակը հայտնաբերվեց, եւ առանձին թաղում ունեցավ:

Ստանալով Խանասորում հայ զինյալների շրջապատման լուրը, Սալմաստի հայ գործիչներն իսկույն եւեթ կարգի են բերում իրենց ուժերը, փութալով օգնության հասնել շրջապատվածներին: Բառացիորեն մի քանի ժամ անց 32 հեծյալ եւ 24 հետեւակ կազմ ու պատրաստ էին Հաֆթվանի մեջ: Սալմաստահայությունը չտեսնված ջերմ եւ գոտեպնդիչ վերաբերմունք ցույց տվեց այս ձեռնարկմանը: Սակայն, ավա՜ղ, դեպի Խանասորի դաշտ ուղղություն վերցրած խումբը դիմակայության է հանդիպում քրդական մեծաթիվ ուժերի կողմից եւ մի քանի ժամ մարտնչելուց հետո ստիպված վերադառնում է:

Ժամանակի հայկական գրեթե բոլոր պարբերականներն անդրադարձան 1896 թվականի Վանի հունիսյան հերոսամարտերին: Մարսելում՝ Մ. Փորթուգալյանի կողմից հրատարակվող «Արմենիա» պարբերականն ընթերցողներին ազդարարում էր թերթի նախկին աշխատակից, ազգային-հեղափոխական մեծանուն գործիչ Մկրտիչ Ավետիսյանի նահատակության լուրը: Վանի ինքնապաշտպանությունն ու խանասորյան ռազմերթը եւս մեկ անգամ խոսուն վկայում են, որ հայությունը պարտավոր է մշտապես ապավինել միայն ու միայն սեփական ուժերին: Այս առումով անչափ ճշմարտացի է այն դիտարկումը, որ 1896 թ. Վանի՝ «Մեծ դեպքին առթիվ հայերը յոթ օրվա գոյամարտով շատ ավելի քիչ զոհ տվին, քան եվրոպական կեղծ ապահովությամբ Բարդուղեմեոսի լեռնաշղթայի եւ Գարահիսար լեռան վրա պաշարումի ենթարկված հայ քաջերը»:

**ԱՐՍԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**
**Պատմագիտության թեկնածու**

# Լիբանանահայ «Ռադիո Սեւանի» նպատակը Սփյուռք-Հայաստան կապերի ամրապնդումն է

## *Փոքր ռադիոկայան՝ հայապահպանության մեծ ցանկությամբ*

***«Ռադիո Սեւան» ռադիոկայանը ստեղծվել է 2007թ. հոկտեմբերին Բեյրութում, հիմնադիրը եւ գլխավոր տնօրենը Արա Սիսեռյանն է՝ Լիբանանի հանգուցյալ վարչապետ Ռաֆիկ Հարիրիի, հիմա էլ նրա որդու՝ Սահադ Հարիրիի խորհրդականը: Ռադիոկայանի գործունեության մասին «Ազգի» հետ զրույցում մանրամասներ հաղորդեց հաստատության գործադիր տնօրեն Միքայել Վայեճյանը:***



**- Ինչո՞ւ է ռադիոկայանը կոչվել «Ռադիո Սեւան» եւ ի՞նչ հիմնական նպատակներով է հիմնվել:**

- Կոչվել է «Ռադիո Սեւան», քանի որ Սեւանը մեզ համար շատ սիրելի է: Հիմնական նպատակը հայապահպանությունն է լիբանանահայ գաղութում եւ գաղութից դուրս: Ռադիոկայանի միջոցով նաեւ նպատակ է դրվել ամրապնդել Սփյուռք-Հայաստան կապերը տարբեր միջոցառումներով: «Ռադիո Սեւանի» նպատակներից է նաեւ զարգացնել քննադատական միտքը սփյուռքահայերի մեջ, քանի որ վերջին քսան տարիներին այդպիսի մոտեցումը տկարացել է, հասկապես երիտասարդներն իրենց հետաքրքրությունները տարբեր ոլորտներում ունեն ու ավելի հաճախ ինքնաբերաբար ընդունում են այն ամենը, ինչ ասվում է նրանց: Սակայն իրականության մեջ մարդ ինքը պետք է ընտրի ու որոշի, թե ինչն է ճիշտ ու ինչը սխալ:

**- Ի՞նչ լեզվով է ռադիոկայանը եւ ի՞նչ ծրագրով է սփռվում եթերում:**

- Ռադիոկայանը 24-ժամյա է, շաբաթվա բոլոր օրերին, միայն հայերենով, ոչ արաբերեն, ոչ անգլերեն հաղորդումներ չունենք, անգամ երաժշտության առումով, զուտ հայկական է: Լիբանանում ռադիոկայան բացելը քաղաքական որոշում է, որ կայացվել է Բեյրութի նախարարական խորհրդում, որի կնքահայրն էլ եղել է Սահաք Հարիրին: Նա շարունակում է հայերի հանդեպ լավ վերաբերմունքը այնպես, ինչպես հայրը:

Լիբանանահայության մեջ դժվար էր գտնել անձնակազմը, որ ռադիոկայանը եթեր դուրս գար: Ռադիոկայանը բացվելու ժամանակ ինձ հրավիրեցին լինելու ռադիոկայանի գործադիր տնօրեն՝ ղեկավարելու ընդհանուր կառավարումը: Առաջինը բացեցինք լուրերի բաժինը, մասնագետների հրավիրեցինք հայկական թերթերից: Հրավիրեցինք նաեւ հաղորդավարուհիների, որ արդեն այդպիսի աշխատանքի փորձ ունեին այլ ռադիոկայաններում:

**- Ի՞նչ կասեք աշխատակազմի մասին:**

- Ռադիոկայանի աշխատանքները սկսեցինք չորս հոգանոց անձնակազմով, այժմ 31 հոգի ենք: Ընդհանրապես երիտասարդներ են, միջին տարիքը 24 է, մեզ համար կարեւոր է, որ երիտասարդներ են աշխատում, համալսարանների լրագրության բաժիններում կամ քաղաքական ամբիոններում սովորողներին հրավիրում ենք, քանի որ նրանք են մեր ապագա կադրերը: Համագործակցում ենք նաեւ տարեց մասնագետների հետ, որոնց փորձառությունը շատ անհրաժեշտ է:

Ամեն առավոտ, բացի շաբաթ եւ կիրակի օրերից, ունենք «Գավաթ մը սուրճ» հաղորդումը, որի ընթացքում տարբեր թեմաներ են քննարկվում՝ երեք ժամ տեւողությամբ: Կա նաեւ ուղիղ եթերով խաղի բաժին, որի ընթացքում օրվա թեմայի շուրջը տրվում են հարցեր: Այս հաղորդումները մեծ ընդունելություն են գտնում Լիբանանի մասշտաբով: «Մեռոպյան անմահներ» հայտագիրը նվիրված է հայ գրականության մեծերին, եւ ամսունքով ներկայացվում են ինչպես հայ մեծերի ստեղծագործությունները, այնպես էլ նրանց կենսագրությունն ու անցած ուղին: «Թղթածրար» հաղորդումը երկու բաժին ունի. քաղաքականում հայ-թուրքական հարաբերությունների թեմայով քննարկումներ են լինում, տարբեր կարծիքներ են հնչում՝ մեծ աշխարհագրության ներկայացմամբ, անդրադառնում ենք նաեւ այլ հարցերի: Հիմնական նպատակը կառուցողական մոտեցում ձեւավորելն է՝ դրսում ճիշտ ներկայացնելով Հայաստանը ու սիրելի դարձնելով: Իբրեւ ռադիոկայան մենք հավատում ենք Հայաստանի պետականության հիմքերին ու աշխատում ենք, որ ամեն ինչ համահունչ լինի այս մոտեցմանը:

**- Հայաստանում որքանո՞վ կարելի է հետեւել ռադիոկայանի հաղորդումներին:**

- Հայաստանում էլ կարող են հետեւել մեր ռադիոկայանի աշխատանքին՝ www.radiosevan.com կայքէջի միջոցով: Գրեթե 70 երկրից մեր կայքէջը հյուրեր է ունենում: Առաջին տեղում Միացյալ Նահանգներից այցելուներն են, ապա՝ Կանադայից, Մեծ Բրիտանիայից, Ֆրանսիայից: Հայաստանը, որ այցելուների թվով 17-րդ երկիրն էր, բարձրացել է 6-րդ տեղը: Կայքը անգլերենով է, հիմա պատրաստվում ենք նաեւ հայերեն եւ ռուսերեն, իսկ ռադիոկայանը հասանելի է հայերեն այնպես, ինչպես սփռվում է Լիբանանում: Մեր հեռարձակման առաջին ամիսը ամսեկան 500 մարդ էր այցելում կայքէջ, հիմա արդեն այդ թիվն անցել է 20 հազարից:

**- Կա՞ն նոր գաղափարներ, որ իրագործվում են արդեն կամ ծրագրում եք իրականացնել:**

- Ռադիոկայանի գործունեությունը ներառում է նաեւ մշակութային ոլորտը ոչ թե եթերի առումով, այլ առանձին, մասնավորապես, Հայաստանից մշակութային գործիչների, խմբերի ենք հրավիրում Լիբանան, կազմակերպում ենք համերգներ:

**- Ինչպե՞ս եք ընտրում, թե ում եւ ե՞րբ հրավիրել, եւ միայն հայե՞ր են գալիս համերգների:**

- Ընտրությունն ըստ ժողովրդի պահանջի է: Ռադիոկայանով երաժշտություն հեռարձակելիս ունենում ենք նաեւ արձագանքներ, ըստ որոնց որոշում ենք, թե որ խմբին, երգչին, ջազային կատարողին հրավիրենք Լիբանան: Պատահում է, որ ոչ հայեր եւս գան մեր կազմակերպած համերգներին, սակայն մեծամասնությունը հայերն են: Ծրագրում ենք, օրինակ, ոչ միայն լիբանանահայ համայնքի ներկայացուցիչներին, այլեւ ընդհանրապես լիբանանցիներին ներկայացնել հայկական ջազը, դասական երաժշտության կատարողներին: Այդ դեպքում հաստատապես լսարանը բաղկացած չի լինի միայն հայերից:

**- Որքանո՞վ է Հայաստանը ներկայացվում ձեր ռադիոկայանի եթերում:**

- Մենք համագործակցում ենք սփյուռքի նախարարության հետ, նրա աջակցությամբ ունենում ենք մեզ անհրաժեշտ տեղեկատվությունը: Ցեղասպանության հարցերի լուսաբանման համար մենք համագործակցում ենք նաեւ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հետ՝ ի դեմս տնօրեն Հայկ Դեմոյանի, ներկայացնում ենք ինստիտուտի տրամադրած նյութերը: Համագործակցություն է ձեւավորվել նաեւ «Հայաստան» հիմնադրամի հետ, որի աշխատանքում լիբանանահայության ներդրման կարեւորությունը բավականին երկար ժամանակ ներկայացվում է մեր ռադիոկայանով:

**- Ինչպե՞ս եք ներկայացնում լիբանանյան կյանքը ձեր եթերում:**

- Մեր եթերում տարբեր հարցերի ենք անդրադառնում, հրավիրում տարբեր մասնագետների: Լիբանանում կան նաեւ հայ պատգամավորներ, բժիշկներ, տնտեսագետներ, տարբեր մասնագիտությունների ներկայացուցիչներ, որոնց հրավիրելու դեպքում կարիք չի լինում նաեւ թարգմանաբար ներկայացնելու նյութը, ինչը արվում է լիբանանցի մասնագետների հրավիրելու դեպքում:

**- Ի՞նչ լսարան ունի լիբանանահայության մեջ ձեր ռադիոկայանը:**

- Լիբանանահայությունը շուրջ 80 հազար է կազմում, որի 83 տոկոսը մեր լսարանն է: Կա նաեւ «Վանա ձայն» ռադիոկայանը, որ պատկանում է Դաշնակցությանը: Մեր ռադիոկայանը կուսակցական չէ, թեեւ անձնակազմում տարբեր կուսակցությունների ներկայացուցիչներ եւ անկուսակցականներ էլ կան:

**ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

AZG NEW PDF.qxd 21/05/2010 21:03 Page 1



# «Ագրեսոր Հայաստան», եւ թե ի՞նչ է ագրեսորն ընդհանրապես

Ըստ միջազգային ժամանակակից իրավական նորմերի՝ «ագրեսորը» իրավական եզր է, որը ենթադրում է մեկ պետության կողմից մեկ այլ պետության տարածքային ամբողջականության, քաղաքական անկախության դեմ՝ ՄԱԿ-ի կանոնադրության տեսակետից ուժի ապօրինի կիրառում: Ընդ որում՝ ագրեսիայի հասկացությունը անպայման ենթադրում է նախաձեռնություն, այսինքն՝ այս բնորոշումը կարելի է տալ միայն նախահարձակ պետությանը:

Իսկ այժմ՝ Ղարաբաղի մասին. նախ՝ մինչեւ ղարաբաղյան պատերազմի սկսելը, 1988-ից Ադրբեջանում իրականացվում էին հայերի բռնի տեղահանումներ, կոտորածներ, մի խոսքով՝ Ցեղասպանություն: Ադրբեջանական «բնաջնջող ձեռքը» անպայման հասնելու էր նաեւ Ղարաբաղ, նրանք արդեն հայերին բնաջնջում ու տեղահանում էին մերձակա Կիրովաբադում: Այս պարագայում ի՞նչ պետք է աներ ոչ միայն սեփական տարածքում, այլեւ ընդհանրապես ապրել ցանկացող ժողովուրդը՝ Ղարաբաղում բոլոր ժամանակներում այդ տարածքներում ճնշող մեծամասնություն կազմող հայերը: Իհարկե, նրանք պետք է պայքարեին՝ սեփական բնաջնջումը սեփական հողում թույլ չտալու համար: Աշխարհի ոչ մի երկիր, ոչ մի միջազգային կառույց չի կարող կոնկրետ նշել այն օրը, ժամը, երբ Հայաստանը հարձակվեց Ադրբեջանի վրա եւ խլեց «նրա տարածքները»:

Սակայն պարզվում է, որ Իսլամական խորհրդաժողով կազմակերպության անդամ երկրները «կարող են նշել այդ օրը». Դուշանբեում կայացած այս կազմակերպության անդամ երկրների արտգործնախարարների 37-րդ նստաշրջանում ընդունվել է «Դուշանբեի հռչակագիր», որտեղ Հայաստանը ճանաչվել է ագրեսոր, պահանջվել է ղարաբաղյան հակամարտությունը լուծել խաղաղ եւ Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը հիմք ընդունելով, մտահոգություն է հայտնվել մուսուլմանական հուշարձանների կործանման վերաբերյալ, որոնք դիտվել են որպես «Հայաստանի դրսեւորած ագրեսիայի հետեւանք», եւ վերջում իսլամական երկրները որոշել են տնտեսական օգնություն ցուցաբերել Ադրբեջանին:

Նախ նշենք, որ Իսլամական խորհրդաժողով կազմակերպության անդամ են նաեւ այնպիսի երկրներ, ինչպիսիք են Իրանը, Լիբանանը, Սիրիան, Ղազախստանը եւ այլն: Այս վերջինի դեպքում իրադրությունը առավել անհասկանալի է թվում. Ղազախստանն այսօր ԵԱՀԿ գործող նախագահն է, իսկ ղարաբաղյան հակամարտության լուծմամբ զբաղվող Մինսկի խումբը, գաղտնիք չէ, որ հենց ԵԱՀԿ-ի ստեղծած մարմին է: Հետեւաբար Ղազախստանը՝ իսլամական երկրների ընդունած այս որոշմամբ, փաստորեն, դրսեւորում է կողմնակալ մոտեցում մի խնդրում, որի վերաբերյալ նախագահ Նուրսուլթան Նազարբաեւն անձամբ, մինչ ԵԱՀԿ-ում նախագահությունը ստանձնելը, երաշխավորում էր, որ կցուցաբերի «հավասարակշիռ մոտեցում»: Այս հռչակագրով, սակայն, կասկածի տակ է դրվում Ղազախստանի օբյեկտիվ, եթե չասենք՝ արդարացի, հետեւաբար առաջանում է ԵԱՀԿ-ում նրա նախագահության վերաբերյալ անվստահության հարց:

Ըստ «Պանորամա.ամ»-ի, Երեւանում Ղազախստանի դեսպանատան ներկայացուցիչ դիվանագետը այս կապակցությամբ նախ նշել է, որ ինքը տեղեկացված չէ, թե ինչպես է քվեարկել իր երկիրը հռչակագիրը ընդունելիս, այնուհետեւ ավելացրել է. «Ես չգիտեմ, միգուցե Ղազախստանը ձեռնպահ է քվեարկել»: Հայկական նույն կայքը զրուցել է նաեւ Երեւանում Իրանի դեսպանատան ներկայացուցչի հետ, վերջինս էլ, ընդգծելով, որ «նստաշրջանը կազմակերպված չի եղել Իրանում, հետեւաբար ճիշտ կլինի նման հարցեր ուղղել այն երկրին, որը եւ կազմակերպել է այդ նստաշրջանը», հետո վստահեցրել է, որ «Իրանի դիրքորոշումը Ղարաբաղի հարցում չի փոխվել, եթե մենք փոխեինք այն, ապա ՀՀ արտաքին գործերի նախարարությունը տեղյակ կլիներ»: Ի՞նչ է ստացվում, Իսլամական խորհրդաժողով կազմակերպության անդամ երկրները, մասնավորապես Հայաստանին առավել մոտ Իրանը, ինչպես նաեւ ԵԱՀԿ-ում նախագահող, տրամաբանորեն՝ օբյեկտիվ ու հավասարակշիռ մոտեցումներ ունենալ պարտավոր Ղազախստանը ընդունել են կամ առնվազն չեն խոչընդոտել՝ Հայաստանին ագրեսոր ճանաչելու որոշմանը: Անշուշտ, կարելի է «ըմբռնումով մոտենալ» նրանց, չէ՞ որ, երբ խոսքը իսլամական համերաշխության մասին է, մնացած բոլոր հարցերը երկրորդական են դառնում: Թերեւս հենց իսլամական համերաշխությունը եւս մեկ անգամ ապացուցելու համար են երկրներից շատերը ենթարկվել Ադրբեջանի շանտաժին: Իսկ ընդունված հռչակագիրը ոչ այլ ինչ է, եթե ոչ, նախ՝ որեւէ արժեք չունեցող միջազգային իրավունքի տեսանկյունից, եւ երկրորդ՝ Ադրբեջանի շանտաժով ստացած հերթական հաղթանակ, սակայն, ինչպես օրեր առաջ դիպուկ նկատեց բրիտանական հայտնի The Guardian-ը. «Ոչինչ չի կարող ստիպել հայկական կողմին հրաժարվել այն տարածքներից, որոնք նա ձեռք է բերել հերոսաբար կռվելով»:

Հ. ԱՓՅԱՆ

Մ. ՆԱԶԱՆԳՆԵՐ

# Տարակարծություններ ԱՄՆ-ում «սինթետիկ բջջի» ստեղծումից հետո



Արհեստականորեն ստեղծված գենոմի հիման վրա արհեստական բջջի՝ «Սինթիայի» ստեղծումը ԱՄՆ-ում բողոքներ է հարուցել եւ տարակարծությունների պատճառ դարձել, հաղորդում է ՌԻԱ գործակալությունը:

Ամերիկացի գիտնականները սինթեզել են Mycoplasma mycoides մանրէի արհեստական գենոմ եւ այն պատվաստել ուրիշ տեսակի մանրէի, ստանալով միայն այդ գենոմով կառավարվող «սինթետիկ բջիջ»: Գիտնականներն աշխատանքի արդյունքների մասին հինգշաբթի օրը գրել են Science հանդեսում:

Դոկտոր Քրեյգ Վենտերի ղեկավարությամբ մի խումբ հետազոտողներ իրենց ստացած լիարժեք սինթետիկ բջջի մեջ համադրել են ծագումնաբանական տեղեկատվությունը: Սենսացիոն տվյալներ հրապարակած գիտնականները պնդում են, թե «Սինթիան» կարող է հրաշքներ գործել՝ կերակրել աշխարհին, փոխարինել վառելիքը եւ նույնիսկ մաքրել աղտոտված օդը, քանի որ հնարավոր է ստեղծել կոնկրետ խնդիրների լուծման համար «նախագծված» մանրէներ:

«Երկրի բարեկամներ» ընկերությունն այս կապակցությամբ հայտարարել է, որ էվոլյուցիայի հերթական փուլի միլիարդավոր տարիներին միանգամից փոխարինող տվյալ գիտական նվաճումը սպառնում է աշխարհին, եւ որ Վենտերի ինստիտուտի բոլոր հետազոտությունները պետք է սառեցվեն:

«Մենք պետք է միանգամայն վստահ լինենք, որ պետական խիստ կարգավորումը կպաշտպանի շրջակա միջավայրը եւ մարդկանց առողջությունը այդ վտանգավոր տեխնոլոգիայից: Մենք առայժմ չենք հասկանում, թե գեներն ինչպես են ազդում կյանքի զարգացման վրա», ասվում է այդ միջազգային կազմակերպության հայտարարության մեջ:

ETC Group հետազոտական «կանաչ» կազմակերպությունն իր հերթին տագնապ է հնչեցրել, պնդելով, թե Վենտերը բացել է «Պանդորայի արկղը»: Խմբի հայտարարության մեջ նշվում է, որ «ի հայտ են գալիս նոր հիմնահարցեր, որոնց պատրաստ չեն ոչ կառավարությունը, ոչ էլ հասարակությունը»:

ETC-ն նույնպես պահանջում է միջազգայնորեն սառեցնել սինթետիկ կենսաբանության մշակումները մասնավոր լաբորատորիաներում, գտնելով, որ դրանք կարող են վտանգ ներկայացնել կյանքի համար:

ԱՄՆ-ի կենսաբանական անվտանգության ազգային գիտական խորհուրդը ստիպված հավաստիացրել է, որ «Սինթիան» նոր կենսաբանական զենք չէ:

Ամերիկյան կրոնական խմբերն իրենց հերթին բարձրացնում են «արհեստական կյանքի» ստեղծման բարոյագիտական հարցը, գտնելով, որ հասարակությունը պատրաստ չէ ընդունելու «կեցության գաղտնիքի» պրագմատիկական վերակենդանացումը:

# Սենատը ընդունեց ֆինանսական բարեփոխման օրինագիծը



Կոնգրեսի վերին պալատը երեկ հավանություն է տվել նախագահ Բարաք Օբամայի առաջարկած ֆինանսական բարեփոխման օրինագիծը, որն ամենից ծավալունն է 1930-ից ի վեր:

Սենատորները 59 «թեր» եւ 39 «դեմ» քվեներով ընդունել են ֆինանսական կարգավորման համակարգի բարեփոխումը, որը կոչված է երաշխավորելու հարկատուների ապահովությունը եւ թույլ չտալու 2008-ի ճգնաժամի կրկնություն:

Նախօրեին հանրապետական սենատորները շրջափակել էին օրինագիծը, որը համարվում է Սպիտակ տան կարեւորագույն գերատեսչություններից մեկը: Սակայն դեմոկրատների հետ անցկացված խորհրդակցություններից հետո որոշվել էր դադարեցնել բանավեճը եւ վերջնական քվեարկության դնել օրինագիծը:

Ֆինանսական օրենսդրությունը խստացնելու Օբամայի վարչակազմի միջոցառումները հասարակության մեջ լայն պաշտպանություն են գտնում: Օբաման մասնավորապես խոստացել է, որ ամերիկացիներն այլեւս երբեք «չեն վճարի Ուոլ Սթրիթի սխալների դիմաց»:

Նախագահի խոսքերով, խոշորագույն ֆինանսական կորպորացիաները միլիոնավոր դոլարներ էին ծախսել Կոնգրեսում օրինագծի ընդունումը թույլ չտալու համար, բայց նրանց ջանքերը ձախողվել էին:

Փաստաթղթում մասնավորապես խոսվում է ֆինանսական ոլորտում ռիսկերի առավել խիստ կարգավորման մասին: Բարեփոխումները վերաբերում են առաջին հերթին դերիվատիվների առեւտրին, նշում է BBC-ն: Օրենքի ուժի մեջ մտնելուց հետո կդյուրացվի վնասաբեր ֆինանսական հաստատությունների լուծարումը:

Նաեւ կհիմնվի նոր վերահսկիչ մարմին, որը կհետեւի բանկային եւ ներդրումային ոլորտներում սպառողների իրավունքների պաշտպանությանը:

# Մուշարաֆը վերադառնում է քաղաքականություն

Պակիստանի նախկին նախագահ Փերվեզ Մուշարաֆը մտադիր է վերադառնալ հայրենիք եւ ակտիվորեն մասնակցել քաղաքական կյանքին: Այդ մասին նա հայտարարել է CNN-ի եթերում:

Առայժմ հայտնի չէ, նա կմասնակցի՞ արդյոք նախագահական ընտրություններին, սակայն, իր իսկ խոստովանությամբ, վարչապետի պաշտոնն իր համար առավել գրավիչ է: Պակիստանում ներկայումս իրական իշխանությունը պատկանում է վարչապետին:

Մուշարաֆը խոստացել է մոտ ժամանակներս դիմել կոնկրետ գործողությունների: Բացի դրանից, նա մտադիր է մասնակցել հաջորդ խորհրդարանական ընտրություններին (2011 թ.):

Նախկին նախագահը նաեւ մեկնաբանել է ՄԱԿ-ի փորձագիտական հանձնաժողովի որոշումը, որով նախկին վարչապետ Բենազիր Բհուտտոյի սպանության (2007-ի դեկտեմբեր) համար պատասխանատու են համարվում Պակիստանի իշխանությունները: Մուշարաֆն ասել է, որ ինքը Բհուտտոյին քանիցս նախազգուշացրել էր նրան սպառնացող վտանգի մասին:

2008-ի օգոստոսին Փերվեզ Մուշարաֆը հրաժարական էր տվել՝ վախենալով, որ իրեն պատասխանատվության կենթարկեն պակիստանցի դատավորների տնային կալանքի համար: Պաշտոնաթողությունից հետո Մուշարաֆը մեկնել էր Մեծ Բրիտանիա: Պակիստանում նրա նկատմամբ քրեական գործ է հարուցված, ուստի վերադարձից հետո կարող է սկսվել դատաքննություն:

# ԱՄՆ-ի ազգային հետախուզության պետի պաշտոնանկությունը



Մայիսի 28-ին ԱՄՆ-ի նախագահ Բարաք Օբաման կընդունի ազգային հետախուզական ծառայության ղեկավար, ծովակալ Դենիս Բլերի հրաժարականը: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրեսը՝ վկայակոչելով Սպիտակ տան անանուն ներկայացուցչի խոսքերը: ABC News հեռուստաալիքի տվյալներով, Բլերի հրաժարականի պատճառը նրա հանդեպ Սպիտակ տան վստահության կորուստն է:

Մայիսի 20-ին Օբաման հետախուզական ծառայության պետի հետ հանդիպում էր ունեցել Սպիտակ տան Ջվաձեւ աշխատասենյակում եւ ընդունել էր հրաժարական տալու նրա առաջարկությունը:

Բլերի պաշտոնաթողությունն անսպասելի չի համարվում: Օրերս Սենատի անվտանգության հարցերի հանձնաժողովը քննադատական հաշվետվություն էր ներկայացրել 2009-ի դեկտեմբերի 25-ին ամերիկյան օդանավում ահաբեկչության անհաջող փորձի քննության արդյունքների վերաբերյալ: 12 էջանոց փաստաթղթում խոսվում է անվտանգության ծառայությունների գործողությունների «համակարգային վրիպումների» մասին, որոնց հետեւանքով 23-ամյա նիգերիացի Ումար Ֆարուկ Աբդուլմութալլաբին հաջողվել էր պայթուցիկով մուտք գործել Ամստերդամ-Դետրոյթ չվերթի ամերիկյան օդանավ (278 ուղեւոր):

Բլերի գերատեսչության մյուս խոշոր «ձախողումների» թվին է դասվում Տեխասի «Ֆորտ Հուդ» ռազմակայանում 2009-ի նոյեմբերի 5-ին տեղի ունեցած միջադեպը: Այդ օրը զինվորական հոգեբույժ, մայոր Նիդալ Մալիք Հասանը գնդակահարել էր 12 ծառայակիցների եւ 1 քաղաքացիական անձի:

Մեկ ուրիշ «ձախողում» է այս տարվա մայիսի 1-ի ահաբեկչության փորձը, երբ ոստիկանությունը Նյու Յորքի կենտրոնում՝ Թայմս սքվերում հայտնաբերեց ականված ավտոմեքենա, որը չէր պայթել զուտ պատահականորեն:

Դենիս Բլերի պաշտոնանկությունը Օբամայի վարչակազմի կադրային քաղաքականության մեջ ամենալուրջ քայլն է նրա նախագահության 16 ամիսների ընթացքում: Հետախուզական գերատեսչության ղեկավարի պաշտոնում Բլերի հավանական իրավահաջորդ է համարվում հակաահաբեկչական ծառայության եւ ներքին անվտանգության ծառայության պետ Ջոն Բրենանը:

# Գլենդեյլի հանրային գրադարանը ժամանակակից հայ գրականության կարիք ունի

## Այստեղ ամենաշատ ընթերցվողը Րաֆֆու վեպերն են

Գլենդեյլի հանրային գրադարանում հայերեն առաջին գրքերը հայտնվեցին 1979-80-ական թթ., երբ գրադարանի ներկայիս՝ Library Services Administrator Նորա Գոլդսմիթի նախաձեռնությամբ կազմակերպվեցին գրքերի առաջին գնումները: Այն ժամանակ նույնիսկ հայկական գրախանութներ չկային, եւ հենց այդ տարիներին հիմնվեցին նաեւ առաջին գրավաճառանոցները՝ սկզբում «Սարդարապատը», հետո «Պերճը», հետո «Արփիլը»՝ Հոլիվուդում: Ամենախոշոր նվիրատվությունն արեց American-Armenian International College-ը, որն իր ողջ գրախանութը հանձնեց Գլենդեյլի հանրային գրադարանին:

2006 թ. հայկական գրքերի թիվը չէր հասնում 1000-ի: Ընդամենը 30 տարվա երիտասարդ կենսագրությամբ հայկական բաժանմունքում դրանց քանակն այսօր 7 հզ. է:

Գլենդեյլի հանրային գրադարանում հայկական գրքերի ու հայերենի հետ կապված աշխատանքների (գրքերի գնում, թարգմանություններ, հայերենով համակարգչային դասընթացներ, զանազան գրական ու գիտական երեկոների կազմակերպում եւ այլն) պատասխանատուն **Էլիզաբեթ Գրիգորյանն** է: Անենայն սիրով ու մանրամասնությամբ է ներկայացնում ամենը, ինչ հաջողվել է իրականացնել անցած մի քանի տարիների ընթացքում:

- Լոս Անջելեսի հանրային գրադարանն էլ հայկական բաժին ունի, Բըրբենքի ու Փասադենայի գրադարանները՝ նույնպես, բայց ամենամեծաքանակն ու հարուստը Գլենդեյլինն է: Ունենք բոլոր հայ դասականների գրքերը, ունենք անգլիագիր հայ գրողների գրքեր՝ Պիտեր Բալաքյան, Վիլյամ Սարոյան, Մարկ Արաքս, Արիս Ջանիկյան, Վահագն Տասրյան, Ռիչարդ Հովհաննիսյան,- մեկ-մեկ թվարկում է նա:



Հայկական բաժանմունքի 7 հզ. գրքերի մեջ նաեւ աղբյուր գրքեր են՝ բառարաններ, հանրագիտարաններ, արվեստի, աշխարհագրության, պատմության գրքեր, կենսագրական աշխատություններ: Գրադարանի Ցեղասպանության արխիվի 620 գրքերից 150-ը եւս հայկական գրքեր են եւ վերաբերում են Հայոց ցեղասպանությանը: Այն գրքերը, որոնք հին հրատարակություններ են, կամ դրանց վերահրատարակում չի իրականացվում, արգելվում է դուրս բերել գրադարանից:

Գրադարանի ամենօրյա 2000-2500 այցելուների մեջ բազմաթիվ են նաեւ հայերը: Իհարկե, կա նաեւ այն հանգամանքը, որ տնտեսական վիճակն է մարդկանց հարկադրել հաճախ այցելել գրադարան, եւ դպրոցական, համալսարանական կամ պարզապես որեւէ աշխատություն կամ գեղարվեստական գիրք ընթերցել եւ ուսումնասիրել այստեղ:

«Ամեն օր երեւի 150-200 հայ ընթերցող է այցելում ընթերցասրահ: Օրվա ընթացքում նրանց կազմն ընդհատ փոխվում է: Գրադարանը տարբեր ծրագրեր է իրականացնում, որոնց այցելուները եւս մեծ թիվ են կազմում. առավոտյան մինչեւ ժամը 12-ը գալիս են անգլերենի, համակարգչի դասընթացների համար: Հատկանշական է, որ այս մարդկանց տարիքը 18-ից մինչեւ 80 տարեկանի սահմանում է»,- նշում է Էլիզաբեթը:

Կեսօրից հետո գալիս են միայն շախմատ խաղացողները, գալիս են դպրոցականներ, որոնցից շատերն այստեղ են կատարում տնային հանձնարարությունները: Գալիս են մանկահասակ երեխաներ՝ ծնողների ձեռքը բռնած:

Գրադարան իմ այցելությունների ընթացքում արդեն հասցրել եմ նկատել կարեւոր մի խնդիր՝ կապված գրքերի որոնման համակարգի հետ: Ընթերցողներից մի քանիսը տրտնջում էին, որ իրենց կամեցած գրքերից չեն կարողանում գտնել:

Հատկապես Հայաստանից գաղթած նորաբնակ հայերի համար անսովոր է գրքերի դասակարգման այն համակարգը, որ կիրառվում է այստեղ եւ ԱՄՆ-ի բոլոր գրադարաններում: Դա այսպես կոչված Dewey Decimal Classification համընդհանուր համակարգն է, որը թվագրում է բոլոր կարգի գրքերը (0-ից մինչեւ 950 եւ ավելի), բացի վեպերից եւ կարճ պատմվածքից: Վերջիններս դասակարգվում են գրողների անվան տակ: Գրականությունը, բանաստեղծությունը, բոլորն իրենց թվերն ունեն: Կենսագրությունները, օրինակ, 920 թվի տակ են: Եվ տացվում է այնպես, որ նույն գրողի հոդվածներն ու վեպերը հայտնվում են տարբեր տեղերում: Բանից անտեղյակ ընթերցողի մեջ էլ թյուր տպավորություն է ստեղծվում, թե գրադարանն աղքատիկ է, քանի որ, օրինակ, Սեւակի բանաստեղծություններն ու հոդվածները բոլորովին տարբեր տեղերում են:

Մի ուրիշ խնդիր է գրքերի համալրումը: Ըստ Էլիզաբեթի՝ հայկական բաժնի համար խիստ դժվար է հայաստանյան ժամանակակից գրականության ձեռքբերումը: «Մեզ պակասում են նոր հրատարակությունները, բայց մենք չենք կարող միայն անցյալով ապրել: Իմ փափագներից մեկն այն է, որ կապ ստեղծվի Հայաստանի գրախանութների կամ գրադարանների հետ, որ կարողանանք համագործակցել: Մենք եւս կարող ենք ուղարկել մեր գրքերից՝ անգլերեն գրքեր, որոնք պակասում են Հայաստանի գրադարաններում:

Մենք ունենք բազմաթիվ այցելուներ, որոնք ծնողների գրադարանները կամ իրենցը, եթե այլեւս չեն օգտագործում, հայերեն չգիտեն կամ այլ ինչ պատճառով, բերում, նվիրում են մեզ: Մի մասն էլ գրողներ են, որ նվիրում են իրենց հրատարակած գրքերը, գրախանութներն էլ ամենամյա ավանդույթ են դարձրել գրքի նվիրատվություն անելը: Վերջերս «Արփիլ», «Պերճ» գրախանութները տարբեր բնույթի գրքեր նվիրեցին, մենք նաեւ գնում ենք իրենցից»:

Էլիզաբեթը շարունակում է, որ գրադարանի ամենօրյա այցելուների մեջ շատ են հատկապես համալսարանականներ USC, UCLA-ից, դպրոցականներ: Րաֆֆին այստեղի հայ ընթերցողի ամենասիրած գիրքն է, Րաֆֆու վեպերն ամենաշատն են կարդում՝ «Սամվել», «Խենթ»: Րաֆֆուց հետո Շիրազն է, Չարենցը, Սեւակը:

Գրադարանի հայկական բաժնի ամենահին հրատարակությունը 1700-1800-ական թթ. գրքեր են: Բայց դրանք դեռ մատչելի չեն ժողովրդին, քանի որ չի որոշվել, ինչպես անել, որ այդ գրքերը օգտագործվելով հանդերձ, չկորեն կամ չվնասվեն: Ճիշտ է, շատ չեն, բայց այդ քիչն էլ ապահով տեղում պիտի լինի եւ պահպանվի:

Հայկական բաժանմունքը 6-7 շարք է գրավում եւ ամենահարուստն է բոլոր ազգերի մյուս բաժանմունքների մեջ:

ԴԻԱՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ
Լոս Անջելես

# Յովհաննէս Բաբախանեանի մենակատարութեամբ «Կոնտրբաս»-ի ներկայացումը ԹՄՄիության կազմակերպմամբ

**Թէքէեան մշակութային միութեան մեծն Նիւ Եորքի «Միհր Մկրտչեան» թատերախմբի կազմակերպութեամբ, մայիս 2, 2010 կիրակի օր երեկոյեան, Էտճուոթըրի (Նիւ Ճըրզի) «Լը Ժարտէն» նշանաւոր գեղահայեաց ճաշարանի մէջ ներկայացուեցաւ ՀՀ վաստակաւոր արտիստ Յովհաննէս Բաբախանեանի մենակատարութեամբ Փաթրիք Զիւսկինտի համբաւաւոր «Կոնտրբաս» մելոդրամատիկ պիէսը: Ըսենք որ հայրենի դերասանը այս ներկայացմամբ 2004-ի «Արմոնոնօ» միջազգային փառատօնին ներկայանալով արժանացած էր գլխաւոր մրցանակին, նոյնը՝ նաեւ 2005-ին Կիեւի «Վիդլունիա» փառատօնին:**



**Թէքէեանի թատերախումբը զինք հրաւիրած է ներկայացնելու այս գարնան աւարտին Սարոյեանի «Սիրտս լեռներու մէջ» ծանօթ թատերախաղը:**

**Թատերասէրներու լուրջ հասարակութիւն մը ներկայ գտնուեցաւ այս ելոյթին: Թաւջութակի հետ մենախօսութիւն մը, որ կու տայ տառապանքը հէք երաժիշտի մը, առանձնութեանը մէջ ունեցած հոգեկան վերիվայրումները անոր մանաւանդ սիրային կեանքին: Որքան ալ թատերասէրներ վերջին տարիներուն առաւելաբար կը գոհանային ծիծաղ արթնցնող թատերական պիէսներու ներկայ գտնուելու, սակայն ուրախութեամբ կ՚արձանագրենք, որ տակաւին ունինք լուրջ թատերասէր ունկնդիրներ, որոնք կը գնահատեն տակաւին դասական բնոյթով թատերական գործերու ներկայացումները:**

**Նիւ Եորքի շրջանակէն ներս, առաջին անգամ ըլլալով նման ներկայացում մը կը տրուէր, սեղաններու շուրջ ու գինիի գաւաթներով, դիտելու միջազգային վարկ վայելող թատերախաղ մը:**

**Ներկայացումէն ետք, վարչութեան ատենապետը՝ պրն Յակոբ Վարդիվառեան, գնահատանքով արտայայտուեցաւ «Միհր Մկրտչեան»-ի անուան թատերախումբի նոր բեմադրիչին մասին ու շնորհակալութիւն յայտնեց օրուան հովանաւոր զոյգին՝ տէր եւ տիկին Սարօ եւ Հիլդա Յարութիւնեաններուն, որոնք ժառանգելով իրենց սէրը, հաւատքն ու ակնածանքը իրենց ծնողներէն Թէքէեան մշակութային միութեան նկատմամբ, բոլորանուէր աջակցութիւն կը բերեն անոր Նիւ Եորքի մասնաճիւղի նախաձեռնութիւններուն:**

# Գայիանէ Մուրատեանի հանդիպումը Նիւ Եորքաբնակ Թէքէեանցիներու հետ

**Հայաստանի Թէքէեան մշակութային միութեան վարիչ քարտուղար Գայիանէ Մուրադեան մայիս 6-ին հայրենիքէն կը ժամանէ Նիւ Եորք: Հիւսիսային Ամերիկայի հայաշատ գրեթէ բոլոր քաղաքներու մէջ այս առթիւ կազմակերպուած են հանդիպումներ՝ ծրագիրը աւելի մօտիկէն ծանօթացնելու ամերիկահայ թէ կանադահայ կրթանուէր ազգայիններու: Ըսենք, որ անցնող այս տարիներուն 400 հազար դոլարի նուիրահաւաք գոյացած է Թէքէեանի անունը կրող Հայաստանի 4 եւ Արցախի մէկ վարժարաններուն համար, հասնելու օգնութեան 300 ուսուցիչներու եւ 75 պաշտօնեաներու: Այս հինգ վարժարաններու մէջ կ՚ուսանին 2972 աշակերտ:**

**Մայիս 7-ին տեղի ունեցաւ առաջին հանդիպումը Էնգլվուդ Քլիֆսի (Նիւ Ճերզի) ԹՄՄ-ի հաւաքավայրին մէջ: Թէքէեանականներ եկած էին լսելու այս ծրագրին մասին տեղեկութիւններ եւ հաղորդուելու արձանագրած յաջողութիւններէն: Բացման աղօթքով այս հայրենանուէր ծրագրին համար աղօթեց Վազգէն վրդ. Գարայեանը՝ Ս. Խաչ եկեղեցւոյ հոգեւոր հովիւը: Օրուան հիւրը ներկայացուց ԹՄՄ Մեծն. Նիւ Եորքի վարչութեան ատենապետ պրն Յակոբ Վարդիվառեան, որ նոյնհետայն բարձր գնահատեց Գայիանէին անվերապահ աջակցութիւնը Նիւ Եորքի թատերախումբին՝ մայր հայրենիք ունեցած հիւրախաղերու օրերուն:**

**Տեսաերիզի վրայ վարչութեան անդամ պրն Վարդան Իլանճեան ներկայացուց տասնամեայ գործունէութեան վաւերական ժապաւէնը: Այնուհետեւ տ. Մուրադեան մէկ առ մէկ ներկայացուց Թէքէեան վարժարաններու կրթական կեանքը: Ըսաւ թէ ուսուցիչներ բարձր կը գնահատեն այս ծրագիրը, որ կու գար ապացուցանել, որ ԹՄՄ-ի աշխատանքը կը մնայ հայրենանուէր ու գերազանցապէս ազգային:**

**Նոյն օրը առաւօտեան պաշտօնական այցելութիւն մը տրուեցաւ Ամերիկայի հայոց առաջնորդարանը, Նիւ Եորք, ուր հանդիպեցաւ առաջնորդ Տ. Խաժակ արք. Պարսամեան: Առաջնորդ սրբազան հօր վերընտրութիւնը շնորհաւորելէ ետք, կրթական մարզով ԹՄՄ-ի կատարած աշխատանքներուն մասին հայրենի հիւրը տուաւ լայն տեղեկութիւններ:**

**Կէսօրէ ետք հանդիպում տեղի ունեցաւ ՄԱԿ-ի մօտ ՀՀ մշտական ներկայացուցիչ դեսպան պրն Կարէն Նազարեանի հետ: Հոս եւս տրուեցան տեղեկութիւններ «Ուսուցիչ մը հովանաւորէ» ծրագրին մասին: Պարոն դեսպանը, որ ջերմ բարեկամն է Թէքէեանի մեծ ընտանիքին, գնահատանքով արտայայտուեցաւ մեր կազմակերպութեան տարիներու վրայ երկարող գործունէութեան մասին: Այս հանդիպումներուն կը մասնակցէին վարչութեան անդամ պրն Յակոբ Վարդիվառեան եւ վարիչ քարտուղար պրն Գէորգ Մարաշլեան:**

**Առանձնապէս, տիկին Գայիանէ Մուրադեան հանդիպումներ ունեցաւ նաեւ ԹՄՄ վարչութեան փոխատենապետին պրն Յարութ Չաքմաճեանի ու ՌԱԿ Նիւ Եորքի Արմենական-Յովսէփեան ակումբի ատենապետ պրն Գրիգոր Սալպաշեանի հետ: Եղաւ հիւրը նաեւ Իրմա եւ Սիլվա Տէր-Ստեփանեաններու, որոնք հաստատած են մասնաւոր մրցանակներ Հայաստանի ԹՄՄ-ի միջոցով:**

Յ. ՎԱՐԴԻՎԱՌԵԱՆ
Նյու Ջերսի

# Մեդալ նվաճել չհաջողվեց

Ծանրամարտի Եվրոպայի պատանեկան առաջնության հերթական օրը մրցահարթակ էին դուրս եկել մինչեւ 77 կգ քաշային ծանրորդները։ Թեեւ Հայաստանը ներկայացված էր երկու մարզիկով, սակայն նրանցից ոչ մեկին չհաջողվեց գոնե մեկ մեդալ նվաճել։ Ռաֆֆի Մելիքյանը երկամարտի 301 կգ (130+171) արդյունքով 19 մասնակիցների մեջ գրավեց 5-րդ տեղը։ Նրա համար հաջող էին հրումային վարժության միայն առաջին երկու մոտեցումները։ Եթե Ռաֆֆին հրում վարժության 3-րդ մոտեցմամբ բարձրացներ 176 կգ-անոց ծանրաձողը, ապա գոնե այդ վարժությունում արծաթե մեդալ կնվաճեր։ Արեն Ներսիսյանը յուրաքանչյուր վարժությունում միայն մեկական հաջող փորձ կատարեց ու երկամարտի 285 կգ (130+155) արդյունքով զբաղեցրեց 6-րդ տեղը։



Դարիա Գոլցովա

Չեմպիոնի կոչման համար մղված պայքարում մրցակցությունից դուրս էր ռուսաստանցի Արտյոմ Օկուլովը, որը երկամարտի 320 կգ (143+177) արդյունքով արժանացավ ոսկե մեդալի։ 2-րդ մրցանակակիր դարձավ բելառուսցի Սերգեյ Գարանինը՝ 310 կգ (135+175)։ Նրան մեկ կգ-ով զիջեց բրոնզե մեդալի արժանացած ռուսաստանցի Մուհամադ Խիբալովը։

Մինչեւ 69 կգ աղջիկների մրցավեճում երկամարտի 194 կգ (85+109) արդյունքով Եվրոպայի չեմպիոնուհի հռչակվեց ռուսաստանցի Դարիա Գոլցովան։ 2-րդ տեղը գրավեց նրա հայրենակցուհի Մարիա Խառլովան՝ 189 կգ (87+102)։ Երկամարտի 186 կգ (84+102) արդյունքով բրոնզե մեդալին արժանացավ բելառուսցի Նատալյա Ֆեդոսենկոն։

Այսօր առաջնությունը կհասնի վերջնագծին։ Հայաստանից մեդալների համար կպայքարեն Համլետ Պողոսյանը (94 կգ), Գոռ Մինասյանն ու Միշա Մուրադյանը (երկուսն էլ՝ 94 կգ-ից բարձր)։

# Ուղեգրի նվաճման հնարավորությունը պահպանվում է

Ֆուտբոլի Հայաստանի երիտասարդական հավաքականն ընտրական մրցաշարում 3-րդ անընդմեջ հաղթանակը տոնելով, դեռեւս որոշակի հնարավորություններ է պահպանում պայքարելու եզրափակիչի ուղեգրի համար։ Դրա համար նախ անհրաժեշտ է ընտրական 2-րդ խմբում զբաղեցնել 2-րդ տեղը, ինչն այնքան էլ հեշտ խնդիր չէ։ Ըստ մրցակարգի, 2-րդ տեղ գրաված հավաքականներից ուղեգիր են ստանալու ընտրական 10 խմբերից չորս լավագույնները։ Ընդ որում միավորները հաշվարկելիս հաշվի են առնվելու միայն խմբում 1-ին, 3-րդ, 4-րդ եւ 5-րդ տեղերը զբաղեցրած հավաքականների հետ հանդիպումների արդյունքները։ Իսկ մեր հավաքականը վաստակած 10 միավորից 6-ը ձեռք է բերել խմբի հետնապահ իռլանդացիների հետ հանդիպումներում։ Այնպես որ առայժմ ՀՀ հավաքականը հաշվարկային 4 միավոր ունի։



ՖՈՏՈԼՈՒՐ

Մեր ֆուտբոլիստներին մնացել է 2 խաղ Վրաստանի հավաքականի հետ։ Առաջինը կայանալու է օգոստոսի 11-ին Երեւանում, 2-րդը՝ սեպտեմբերի 7-ին Թբիլիսիում։ Եթե մեր հավաքականին հաջողվի 2 խաղերում էլ հաղթել, ապա 2-րդ տեղի հարցը կախված կլինի Թուրքիայի հավաքականի ելույթներից։ Թուրքերին մնացել է անցկացնելու 4 խաղ։ Վաղը թուրքերը հյուրընկալվելու են էստոնացիներին, իսկ մայիսի 26-ին Շվեյցարիայում մրցելու են առաջատարի հետ։ Վերջին 2 հանդիպումները նրանք անցկացնելու են սեփական հարկի տակ։ Սեպտեմբերի 4-ին թուրքերը հյուրընկալելու են վրացիներին, 3 օր անց մրցելու են իռլանդացիների հետ։ 2-րդ տեղը զբաղեցնելու համար թուրքերին անհրաժեշտ կլինի նվազագույնը վաստակել 7 միավոր, եթե իհարկե հայ ֆուտբոլիստները 2 խաղում էլ հաղթեն վրացիներին։

Իհարկե, եթե նույնիսկ մեզ չհաջողվի խմբում 2-րդ տեղը զբաղեցնել, երիտասարդական հավաքականի վերջին հանդիպումները հուսադրող են։ Դանիացի մասնագետ Ֆլեմինգ Սերիցլեւին իսկապես հաջողվել է մարտունակ կոլեկտիվ կազմավորել, որում խաղում են նաեւ ազգային հավաքականի մի խումբ ֆուտբոլիստներ։ Ափսոս միայն, որ մեր հավաքականը մեկնարկում ձախողվեց՝ կրելով 4 անընդմեջ պարտություն, իսկ դրանից հետո Երեւանում ձեռքից բաց թողեց հաղթանակը էստոնացիների հետ մրցավեճում։ Հակառակ դեպքում եզրափակիչի ուղեգիր նվաճելն ավելի իրատեսական կլիներ։

Վերջում ներկայացնենք մեր հավաքականի կազմն էստոնացիների հետ հաղթական խաղում. Էդուարդ Հովհաննիսյան, Արտաշես Առաքելյան, Արտակ Անդրիկյան, Արթուր Յուզբաշյան, Արտակ Եդիգարյան, Կառլեն Մկրտչյան, Էդգար Մալաքյան (Հովհաննես Համբարձումյան, 88), Գեւորգ Ղազարյան (Հրաչ Յագան, 90+4), Դավիթ Մանոյան, Զավեն Բադոյան (Գեւորգ Բադալյան, 69), Հենրիխ Մխիթարյան։

Դեղին քարտի են արժանացել Մկրտչյանը, Ղազարյանն ու Մանոյանը։

Մրցաշարային աղյուսակ

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Շվեյցարիա | 7 | 5 | 1 | 1 | 14-6 | 16 |
| 2. Թուրքիա | 6 | 3 | 1 | 2 | 10-9 | 10 |
| 3. Հայաստան | 8 | 3 | 1 | 4 | 14-16 | 10 |
| 4. Էստոնիա | 8 | 2 | 3 | 3 | 8-11 | 9 |
| 5. Վրաստան | 6 | 2 | 2 | 2 | 8-5 | 8 |
| 6. Իռլանդիա | 7 | 0 | 4 | 3 | 6-13 | 4 |

# Գավաթը սպասում է նոր տիրոջը

Այսօր Մադրիդի «Սանտյագո Բեռնաբեու» մարզադաշտում Երեւանի ժամանակով 23.45-ին կսկսվի չեմպիոնների լիգայի «Բավարիա»-«Ինտեր» եզրափակիչ հանդիպումը։

Մյունխենցիների համար դա կլինի պատվավոր մրցանակի 8-րդ եզրափակիչը, որից 4-ն ավարտվել է «Բավարիայի» հաղթանակով։ Առաջին հաջողությանը գերմանացիները հասել են 1974-ին։ Եզրափակիչի վերախաղարկման ժամանակ 4-0 հաշվով ջախջախելով իսպանական «Ատլետիկոյին» (առաջին խաղն ավարտվել էր ոչ-ոքի՝ 1-1)։

Հաջորդ մրցաշրջանում եւս «Բավարիան» նվաճեց գավաթը՝ 2-0 հաշվով հաղթելով անգլիական «Լիդսին»։ Իսկ 1976-ին «Բավարիան» յուրօրինակ հեթ տրիկի հեղինակ դարձավ։ Հաղթելով «Սենտ Էթիենին» (1-0), թիմը 3-րդ տարին անընդմեջ դարձավ չեմպիոնների գավաթակիր՝ կրկնելով «Ռեալի» եւ «Այաքսի» ռեկորդային ցուցանիշը։

Դրանից հետո թիմը 3 անգամ անհաջողության մատնվեց եզրափակիչներում (1982-ին «Աստոն Վիլա»՝ 0-1, 1987-ին «Պորտո»՝ 1-2, 1999-ին «Մանչեսթր Յունայթեդ»՝ 1-2)։ Վերջին անգամ «Բավարիան» եզրափակիչում հանդես է եկել 2001-ին՝ 11 մ հարվածներով հաղթելով «Վալենսիային» (հիմնական ժամանակում ոչ-ոքի՝ 1-1)։

«Ինտերը» 5-րդ անգամ է խաղալու եզրափակիչում։ 1964-ին եւ 1965-ին թիմը նվաճել է չեմպիոնների գավաթը՝ հաղթելով համապատասխանաբար «Ռեալին» (3-1) եւ «Բենֆիկային» (1-0)։ Իսկ ահա 1967-ին եւ 1972-ին իտալական ակումբը մրցանակը զիջել է համապատասխանաբար «Սելթիկին» (1-2) եւ «Այաքսին» (0-2)։

## Կեղծարարը ձերբակալվեց

Իտալիայի ոստիկանությունը ձերբակալել է 35-ամյա մի տղամարդու, որը Սալերնոյում ընդհատակյա տուրիստական գործակալություն էր հիմնել եւ զբաղվում էր կեղծ ուղեգրերի վաճառքով։ Ուղեգիրը հնարավորություն էր տալիս 2 օր զբոսնել Մադրիդում ու ներկա գտնվել այսօր կայանալիք չեմպիոնների լիգայի «Բավարիա»-«Ինտեր» եզրափակիչ հանդիպմանը։ Ուղեգրի արժեքը 1500 եվրո է։ Ձերբակալման պահին նա արդեն հասցրել էր մոտ 100 հազար եվրո գումար ստանալ վաճառված ուղեգրերի դիմաց։

ԲՌՆՑՔԱՄԱՐՏ

# Դարչինյանը չեմպիոն հռչակվեց քաշային 3-րդ կարգում

Վախթանգ Դարչինյանը նվաճեց IBO-ի վարկածով աշխարհի չեմպիոնի տիտղոսը թեթեւագույն քաշային կարգում (մինչեւ 53,5 կգ)՝ Ավստրալիայի Պարամատե քաղաքում հաղթելով ֆիլիպինցի Էրիկ Բարսելոնային։ Թեեւ հայ բռնցքամարտիկը մենամարտում էր վնասված ձեռքով, սակայն մեկ անգամ առաջին, երկու անգամ էլ 5-րդ ռաունդներում մրցակցին նոկդաունի ենթարկեց։ Մրցավարների միաձայն որոշմամբ հաղթանակը տրվեց Դարչինյանին։

Այսպիսով, Դարչինյանը քաշային 3-րդ կարգում էլ չեմպիոն հռչակվեց։ Մինչ այդ, նա չեմպիոն էր դարձել առաջին թեթեւագույն (մինչեւ 52,2 կգ) եւ գերթեթեւագույն (մինչեւ 50,8 կգ) քաշային կարգերում։ Թեթեւագույն քաշային կարգում աշխարհի չեմպիոնի տիտղոսը նվաճելու Դարչինյանի առաջին փորձն անհաջողությամբ էր մատնվել։ 2009-ի հուլիսի 11-ին նա պարտվել էր IBF-ի վարկածով այդ քաշում աշխարհի չեմպիոն, գանացի Ժոզեֆ Ագբեկոյին։

Պրոֆեսիոնալ ռինգում Դարչինյանն իր 35-րդ հաղթանակը տոնեց։



Մեկ մենամարտում գրանցվել է ոչ-ոքի, 2-ում Վախթանգը ռինգից հեռացել է պարտված։ Նրա հերթական մրցակից Էրիկ Բարսելոնան թեեւ դեռ 28 տարեկան է, սակայն պրոֆեսիոնալ ռինգում 73 մենամարտ է անցկացրել, որոնցից հաղթել է 51-ում, 4-ն ավարտել է ոչ-ոքի, կրել է 18 պարտություն։

# Հաղթեց առաջատարին ու բավարարվեց 5-րդ տեղով

Ռուսաստանի Կիրիշի քաղաքում վերջնագիծը հատեց «Աշխարհի պատանի աստղեր» շախմատի մրցաշարը։ 17-ամյա գրոսմայստեր Սամվել Տեր-Սահակյանը վերջին տուրից առաջ հավակնում էր մրցանակային տեղի։ Ավարտական տուրում նրա մրցակիցը միանձնյա առաջատար Յարոսլավ Ժերեբուխն էր, որը 10-րդ տուրում անդրանիկ պարտությունն էր կրել։ Սպիտակներով խաղացող հայ շախմատիստն իրեն գերազանց դրսեւորեց ու 65-րդ քայլին հաղթանակ տոնեց։ Սամվելը 11 հնարավորից վաստակեց 7 միավոր եւ միայն լրացուցիչ գործակիցներով զիջելով նույնպիսի արդյունքի հասած Վլադիմիր Բելոուսին եւ Դանիլ Լինչեւսկուն, գրավեց 5-րդ տեղը։

Ամեն դեպքում Հայաստանի ամենաերիտասարդ գրոսմայստերի ելույթը պետք է հաջող համարել։ Նա տոնեց 6 հաղթանակ, 2 պարտիա ավարտեց ոչ-ոքի, կրեց 3 պարտություն։ Սամվելը պատանեկան մրցաշարերում զգալի հաջողությունների է հասել։ Նա մինչեւ 10 եւ մինչեւ 18 տարեկանների Եվրոպայի չեմպիոն է դարձել, մինչեւ 12 եւ մինչեւ 16 տարեկանների Եվրոպայի փոխչեմպիոն է, մինչեւ 12 տարեկանների աշխարհի առաջնության բրոնզե մրցանակակիրը։ 2008-ին շախմատի Հայաստանի մեծահասակների առաջնությունում Տեր-Սահակյանը դարձել է բրոնզե մրցանակակիր։

Հայ շախմատիստն իր հաղթանակով հնարավորություն էր ընձեռել ռուսաստանցի Վլադիմիր Բելոուսին միավորներով հավասարվել Ժերեբուխին։ Սակայն ավարտական տուրում Բելոուսը պարտվեց Վիտալի Բեռնադսկուն եւ ստիպված էր բավարարվել 3-րդ տեղով։ Չեմպիոն հռչակվեց 8 միավոր վաստակած Յարոսլավ Ժերեբուխը, իսկ 2-րդ տեղը գրավեց հնդիկ միջազգային վարպետ Շալմալի Գեսուրամանը։ Հաղթելով Իվան Բուկավշինին, նա վաստակեց 7,5 միավոր։ 6-12-րդ տեղերը զբաղեցրին Վիտալի Բեռնադսկին՝ 6 միավոր, Ուլվի Բաջարանին՝ 5,5, Ալեքսանդր Շիմանովը՝ 5,5, Իվան Բուկավշինը՝ 5, Ալինա Կաշլինսկայան՝ 3,5, Գրիգորի Օպարինը՝ 2,5 եւ Ալեքսանդր Գանիչեւը՝ 1,5։

# Չեմպիոնի չորս հավակնորդները հայտնի են

Ավարտվեց շախմատի ԱՄՆ-ի առաջնության նախնական փուլը, որի արդյունքներով որոշվեցին չեմպիոնի տիտղոսի 4 հավակնորդները։ Շրջանաձեւ մրցակարգով անցկացվելիք մրցաշարում չեմպիոնի տիտղոսը կվիճարկեն 5-ական միավոր վաստակած Հիկարու Նակամուրան, Գատա Կամսկին, Ալեքսանդր Օնիշչուկն ու Յուրի Շուլմանը։ Ավարտական՝ 7-րդ տուրում Շուլմանն ու Օնիշչուկը հաշտություն կնքեցին։ Նակամուրան ոչ-ոքի խաղաց Լարի Քրիստիանսենի հետ, Կամսկին միավորը բաժանեց Ալեքսանդր Շաբալովի հետ պարտիայում։

Վարուժան Հակոբյանը սեւերով պարտվեց Ռոբերտ Հեսին եւ 3,5 միավորով զբաղեցրեց 12-րդ հորիզոնականը։ 13-14-րդ տեղերի համար պայքարում Հակոբյանը սպիտակներով կմրցի Յան Էլվեստի հետ։

Ավարտական տուրը հաջող էր Մելիքսեթ Խաչիյանի եւ Լեւոն Ալթունյանի համար, որոնք հաղթեցին համապատասխանաբար Ժոել Բենջամինին ու Սամուել Շանկլանդին։ Ընդ որում Ալթունյանն անդրանիկ հաղթանակը տոնեց ու նախնական փուլում 2,5 միավորով զբաղեցրեց 21-րդ տեղը։ Նա 19-20-րդ տեղերը կվիճարկի Ժոել Բենջամինի հետ պարտիայում։ Մելիքսեթ Խաչիյանը 3 միավորով 17-րդ տեղում է։ 15-16-րդ տեղերի համար մրցավեճում նա կհանդիպի Ռայ Ռոբսոնի հետ։

## Ռուսները ռեւանշի հասան

Հոկեյի Ռուսաստանի հավաքականը ռեւանշի հասավ օլիմպիական չեմպիոն Կանադայի ընտրանու նկատմամբ Վանկուվերում կրած պարտության դիմաց։ Ռուս հոկեյիստները վստահ հաղթանակ տոնեցին 5-2 հաշվով։ Այսօր կայանալիք կիսաեզրափակիչ խաղում ռուսները կմրցեն առաջնության կազմակերպիչ երկրի՝ Գերմանիայի ընտրանու հետ։ Վերջինս 1-0 հաշվով պայքարից դուրս մղեց շվեյցարացիներին, որոնք համարվում էին կիսաեզրափակիչի ուղեգրի հավակնորդներ։ Գերմանացիների համար կիսաեզրափակիչում հանդես գալը պատմական նվաճում է, քանի որ նման արդյունքի նրանք հասել էին մինչպատերազմական տարիներին։ Իսկ հավաքականի նորագույն պատմությունում լավագույնը 1993-ին զբաղեցրած 5-րդ տեղն է։ Ի դեպ, այդ տարի առաջնությունն անցկացվում էր Գերմանիայում, որտեղ չեմպիոն հռչակվեց ՌԴ հավաքականը։

Կիսաեզրափակիչի մյուս զույգը կազմել են մշտական մրցակիցներ չեխերն ու շվեդները։ Չեխերը դժվարին պայքարում, միայն բուլիտներով (հիմնական ժամանակում՝ 1-1) առավելության հասան ֆինների նկատմամբ։ Իսկ շվեդները 4-2 հաշվով պարտության մատնեցին դանիացիներին։

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

AZG NEW PDF.qxd 21/05/2010 21:05 Page 1



# Հայերը Թուրքիայում թուրք-քուրդ բախումներ հրահրելու կարիքը չունեն

*1-ին էջից*

Նախ ասենք, որ PKK-ն կազմավորվել է 1978-ի նոյեմբերի 27-ին: Դրան է հետեւել այս կազմակերպության ռազմական կառույցները հանդիսացող Քուրդիստանի ազատագրության ժողովրդական բանակի՝ ARGK-ի, ապա Քուրդիստանի ազատագրության ազգային ճակատի՝ ERNK-ի կազմավորումը համապատասխանաբար 1984-ի օգոստոսի 15-ին եւ 1985-ի մարտի 21-ին: Հենց այդ տարիներին սկզբնավորվեց PKK-ի զինված պայքարը թուրքական պետության դեմ:

Այս պայքարն ապստամբությո՞ւն է, թե՞ ահաբեկչություն, թող որոշի Հալաչօղլուն: Բայց որ 1923-ի հոկտեմբերի 29-ին հռչակված Թուրքիայի Հանրապետության ավելի քան 80-ամյա պատմության ընթացքում մեծ ու փոքր քրդական 47 ապստամբություն է եղել, եւ այդ փաստը թուրքական մամուլի բազմաթիվ հրապարակումներում արձանագրվել է, կասկած չի հարուցում:

Ընդ որում, քրդական առաջին ապստամբությունը, որը կոչվում է ղեկավարի՝ շեյխ Սայիդի անունով, բռնկվել է 1924-ի մարտին, այսինքն՝ Թուրքիայում հանրապետական կարգերի հռչակումից ընդամենը 5 ամիս հետո, իսկ 1925-ին՝ ճնշվել: Դրան հաջորդել են 1927-1931 թթ. Արարատի եւ 1937-1938 թթ. Դերսիմի համաքրդական ապստամբությունները, իսկ մյուսները տեղային բնույթ կրելու պատճառով լայն արձագանք չեն գտել:

Թուրքական իշխանությունները ամենայն դաժանությամբ ճնշել էին դեռեւս մի քանի տարի առաջ իթթիհատականների, ապա եւ քեմալականների առաջադրանքով 1915-23 թթ. սիրահոժար հայերի ցեղասպանությանը ընչաքաղց թուրք մարդասպանի հետ մասնակցող, անդրշիրիմյան աշխարհում դրախտ ընկնելու համար «գոնե 3 հայի սպանությունը» սրբազան պարտք համարող, անպաշտպան կանանց եւ երեխաներին անխնա հոշոտող եւ հոշոտելուց ստացած բավականությունը, հայտնի իրավապաշտպան Ռագըփ Զարաքոլուի դիպուկ արտահայտությամբ, «հայ սպանելը պարծենկոտությամբ» արտահայտող ապստամբ քուրդ աշիրաթներին, առանց, իհարկե, խնայելու կանանց ու երեխաներին, ինչպես հայերի պարագայում չէին խնայում իրենք՝ քրդերը:

Այլ կերպ՝ հայերը թուրք-քուրդ բախումներ չեն հրահրել, դրա կարիքն էլ չունեն: Նրանք պարզապես հավասարակշռել են թուրքերի եւ քրդերի հարաբերությունները: Տրամաբանական է, որ հայերի բնաջնջումը հանգեցնելու էր այդ հավասարակշռության խախտման, իսկ խախտումն անխուսափելի էր դարձնելու թուրք-քուրդ բախումները: Քանի որ բնաջնջումը թուրքերի հետ սերտ համագործակցությամբ իրականացրել են նաեւ քրդերը, ուստի իրենք են ստեղծել բախումների անհրաժեշտ նախադրյալները: Այսպիսով՝ հայերի բնաջնջումը ոխերիմ թշնամիներ է դարձրել երբեմնի դաշնակիցներին:

Ավելին, հայերի բնաջնջմանը սիրահոժար մասնակցությունը թուրք ժողովրդի հոծ զանգվածների մեջ վերստին արթնացրել էր անասնապահ քոչվոր ցեղերի վայրենությունը, իսկ կիսավայրենի քրդական աշիրաթներն արդեն քոչվոր էին, հետեւաբար անհրաժեշտ նախադրյալների, ինչպես նաեւ թշնամանքի առկայությամբ, առնվազն բախումների չափ անխուսափելի դարձան դրանց դաժան բնույթն ու ավելի քան արյունահեղ ընթացքը: Այսինքն, թուրք-քուրդ բախումների դաժանության եւ արյունահեղության հիմքում եւս հայերի նկատմամբ թուրքերի եւ քրդերի մարդասպան համատեղ գործունեությունն է:

Պրոֆ. Յուսուֆ Հալաչօղլուն իբրեւ պատմաբան, այն էլ իր գիտական ողջ գործունեությունը Հայոց ցեղասպանության թուրքական ժխտողականությունը հիմնավորելու գործին նվիրած, չի կարող այդ ամենի մասին չիմանալ: Գիտի, բայց հետամուտ լինելով տեսականորեն հայ-քուրդ բախումներ հրահրելու պետական առաջադրանքին, հայերի բնաջնջումով Թուրքիայում անխուսափելի դարձած թուրք-քուրդ բախումները վերագրում է Թուրքիան մասնատելու հայկական նկրտումներին:

ԾԱՆՈՒՑՈՒՄ

## Սիրելի՛ հայրենակիցներ

Այս տարի լրանում է Վանի 1915 թվականի Հերոսամարտի 95-ամյակը:

Շնորհիվ այդ ինքնապաշտպանական կռիվների թուրքական յաթաղանից փրկվեց շուրջ 200000 հայ, որոնց մեծ մասը գաղթեց եւ հանգրվանեց Հայաստանի այժմյան տարածքում, ինչը կարեւոր նշանակություն ունեցավ ոչ միայն հայկական գենոֆոնդի պահպանման, այլեւ որոշիչ դեր խաղաց Հայաստանի պետականության կայացման համար: Հայոց պատմության ընթացքում Վանի Հերոսամարտը այն բացառիկներից էր, երբ ողջ ժողովուրդը միակամ էր, ինքնապաշտպանության ընթացքում Վանում առկա էր կուսակցական համերաշխություն: Քաղաքի ողջ բնակչության միասնական պայքարը ղեկավարում էին Արամ Մանուկյանն ու Արմենակ Եկարյանը եւ արդյունքում արձանագրվեց փայլուն հաղթանակ:

Այսօր Վասպուրական պատմական աշխարհից գաղթած, Եղեռնը վերապրած վասպուրականցիների սերունդները միավորված են «Վասպուրական» հայրենակցական միության մեջ: Վասպուրականցիները, Արմենական-ՌԱ կուսակցության հետ համատեղ, **մայիսի 23-ին ժամը 12.00-ին «Արծիվ Վասպուրականի» հուշարձանի մոտ** (Աշտարակից Գյումրի տանող ճանապարհին) նշելու են Վանի Հերոսամարտի տարեդարձը:

Վասպուրականցիների բոլոր ժառանգներին ու մեր հայրենակիցներին հրավիրում ենք մասնակցելու Վանի Հերոսամարտին նվիրված ավանդական այդ դաշտահանդեսին: Ավտոբուսները առավոտյան ժամը 11:00-ին կշարժվեն Հանրապետության հրապարակից:

Մինչ այդ, **մայիսի 22-ին, ժամը 15:00-ին,** Հայֆիլհարմոնիայի «Ա. Բաբաջանյան» դահլիճում տեղի կունենա հանդիսավոր նիստ՝ նվիրված Վանի հերոսամարտի 95-ամյակին: Մուտքը՝ հրավիրատոմսերով:

Մանրամասնությունների համար կարող եք զանգահարել 529583 094 890690 եւ 566845, 091 566845, 077 566845 հեռախոսահամարներով:

***«ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ» ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ***

***ԱՐՄԵՆԱԿԱՆ-ՌԱԿ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ***

www. azg.am

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
## 2010 թ. մայիս ամսվա վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ

**2010 թ. մայիսի 11-ի ՀՀ ԿԲ խորհրդի նիստին մասնակցում էին՝ ՀՀ ԿԲ նախագահ Արթուր Ջավադյանը, նախագահի տեղակալ Վաչե Գաբրիելյանը, խորհրդի անդամներ Ամալյա Սարիբեկյանը, Աշոտ Մկրտչյանը, Անդրանիկ Նորեկյանը, Վախթանգ Աբրահամյանը:**

**Խորհրդի նիստը, որը հաջորդել է դրամավարկային քաղաքականության ծրագրի հրապարակմանը, սկսվեց իրավիճակային հաշվետվության ներկայացմամբ: Առկա նոր տեղեկատվության հիման վրա գնահատականներ տրվեցին գնաճի, արտաքին միջավայրի, իրական, հարկաբյուջետային եւ դրամավարկային հատվածների ընթացիկ միտումներին: Հիմնական մակրոտնտեսական զարգացումները համահունչ էին ԿԲ կանխատեսումներում նախանշված ուղղություններին: Տարեսկզբից դրամավարկային պայմանների աստիճանական խստացման պայմաններում, 12-ամսյա գնաճը շարունակաբար նվազում է եւ ՀՆԱ-ն վերականգնվում է կանխատեսվածից ավելի արագ տեմպերով: Այդուհանդերձ, գնաճային միջավայրը դեռեւս պահպանվում է՝ պայմանավորված 2009 թ. իրականացրած դրամավարկային եւ հարկաբյուջետային քաղաքականությունների ընդլայնողական ազդեցությունների փոխանցմամբ եւ հիմնական կոմունալ ծառայությունների սակագների աճով:**

**Ըստ պաշտոնական վիճակագրության, 2010 թ. ապրիլին նախորդ ամսվա նկատմամբ արձանագրվել է 1.3% գնաճ, որի պարագայում 12-ամսյա գնաճի ցուցանիշը կազմել է 6.8%՝ նախորդ ամսվա նույն ցուցանիշի նկատմամբ նվազելով 2.0 տոկոսային կետով: Ընդ որում՝ պարենային ապրանքների գներն աճել են 0.7%-ով (նպաստումը գնաճին 0.36 տոկոսային կետ), ոչ պարենային ապրանքների գները՝ 1.8%-ով (նպաստումը գնաճին 0.3 տոկոսային կետ), իսկ ծառայությունների սակագները՝ 2.2%-ով (նպաստումը գնաճին 0.65 տոկոսային կետ): Ապրիլին արձանագրված գնաճը հիմնականում պայմանավորվել է բնակչությանը գազային վառելիքի վաճառքի սակագնի 37.5% (նպաստումը ընդհանուր գնաճին 0.5 տոկոսային կետ), խմելու ջրի մատակարարման սակագնի 5.5% (նպաստումը ընդհանուր գնաճին 0.03 տոկոսային կետ) աճով, ինչպես նաեւ մսամթերքի, շաքարավազի, կենդանական եւ բուսական յուղ ապրանքախմբի, մրգի եւ բենզինի ու դիզելային վառելիքի գների յուրաքանչյուրի գծով 0.1 տոկոսային կետ նպաստումներով ընդհանուր գնաճին: Գների որոշակի նվազում է արձանագրվել ձվի եւ բանջարեղեն ու կարտոֆիլ ապրանքախմբերում:**

**Իրավիճակային հաշվետվության ներկայացումից հետո խորհուրդը սկսեց քննարկումներն արտաքին եւ ներքին զարգացումների, դրամավարկային քաղաքականության ուղղությունների վերաբերյալ: Համաշխարհային տնտեսության սպասվածից ավելի արագ տեմպերով վերականգնման պայմաններում ապրիլին ԱՄՀ-ն վերանայեց 2010-11թթ. համաշխարհային տնտեսական աճի կանխատեսումը՝ վերագնահատելով այն 2010 թ. համար 4.25%: Այս սպասումներն արդեն իսկ արտացոլվել էին ֆինանսական շուկաներում եւ ապրիլին ապրանքային շուկաներում գները հիմնականում պահպանվեցին նախորդ ամսվա մակարդակներում: Միաժամանակ, խոշոր երկրներն աստիճանաբար հրաժարվում են ընդլայնողական հարկաբյուջետային եւ դրամավարկային քաղաքականության իրականացումից, սակայն դեռեւս ձեռնպահ են մնում վերաֆինանսավորման (հաշվարկային) տոկոսադրույքի բարձրացումից:**

**Խորհուրդը քննարկեց նաեւ ԱՄՆ դոլարի նկատմամբ եվրոյի արժեզրկման ներկայիս միտումների հնարավոր ազդեցությունները ՀՀ տնտեսության վրա կարճաժամկետ եւ երկարաժամկետ ժամանակահատվածներում: Առաջինի պարագայում էական ազդեցություն չի ակնկալվում: Երկրորդի պարագայում Եվրոյի փոխարժեքի ցածր մակարդակի պահպանումը, հավանական է, կհանգեցնի Եվրոմիությունից ներմուծվող ապրանքների գների նվազման: Քանի որ եվրոյի արժեզրկումը տեղի է ունեցել Եվրոմիության որոշ անդամ երկրների պարտքային հիմնախնդիրների պատճառով, իրավիճակի վատթարացման դեպքում չեն բացառվում նոր ճգնաժամային երեւույթները տարածաշրջանում եւ աշխարհում: Այդուհանդերձ, Հայաստանի տնտեսությունը որոշ չափով ապահովագրված է եվրոյի փոխարժեքի տատանումներով պայմանավորված ազդեցություններից, քանի որ ֆինանսական հոսքերի առումով ՀՀ հիմնական գործընկերը Ռուսաստանի Դաշնությունն է: ՀՀ կենտրոնական բանկը շարունակելու է հետեւել իրավիճակի զարգացումներին:**

**Մակրոտնտեսական իրավիճակի բարելավման արդյունքում մարտին եւս արձանագրվել է տնտեսական աճ. ՀՆԱ իրական աճը հունվար-մարտին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ կազմել է 5.5%: Ընդ որում, աճեր արձանագրվել են տնտեսության բոլոր ճյուղերում. արդյունաբերությունում գրանցվել է ավելացված արժեքի շուրջ 6.1%, շինարարությունում՝ 9.7%, ծառայությունների ոլորտում՝ 5.1%, գյուղատնտեսությունում՝ 3.1% աճ:**

**Սպասվածից ավելի արագ աճ է դիտվել նաեւ ապրանքների արտահանման մասով՝ պայմանավորված համաշխարհային պահանջարկի աճի հետեւանքով տեղի ունեցած մետաղների միջազգային գների գրանցված բարձր աճով, նախորդ տարվա երկրորդ եռամսյակից սկսած խոշոր արտահանող ճյուղերին կառավարության աջակցությամբ: Ներքին տնտեսության վաղ վերականգնումն արտահայտվել է նաեւ ներմուծման աճով՝ պայմանավորված հիմնականում ներդրումային ապրանքների եւ վառելիքի ներմուծման ծավալների ավելացմամբ:**

**Խորհուրդը քննարկեց նաեւ ՀՀ ֆինանսական շուկայի զարգացումները: Ապրիլին դոլարայնացման աճի տեմպը փոքր-ինչ նվազել է. դրամով ավանդների աճը կազմել է 1.6%, արտարժույթով ավանդներինը՝ 0.8%: Չնայած դրան, արտարժույթով վարկավորման ծավալները շարունակում են գերազանցել դրամով վարկավորման ծավալները: Դոլարայնացման դեռեւս բարձր մակարդակի պայմաններում, տարեսկզբից ԿԲ-ի կողմից դրամավարկային պայմանների խստացմանը համահունչ ՊՊ առաջնային շուկայում մինչեւ 1 տարի մարման ժամկետայնությամբ պարտատոմսերի տոկոսադրույքներն ավելացել են շուրջ 1.6 տոկոսային կետով՝ կազմելով 10.7%, իսկ 3-5 տարի մարման ժամկետայնությամբ պարտատոմսերինը՝ 0.93 տոկոսային կետով՝ կազմելով 14.8%: Միաժամանակ, միջբանկային ռեպո շուկայում տոկոսադրույքների աճը կազմել է 2.2 տոկոսային կետ:**

**Անդրադառնալով գնաճի հետագա զարգացումներին եւ դրամավարկային քաղաքականության ուղղություններին՝ Խորհուրդը փաստեց, որ տարեսկզբից դրամավարկային պայմանների աստիճանական խստացման պարագայում 12-ամսյա գնաճի տեմպերը շարունակաբար նվազում են: Միաժամանակ սպասվում է, որ համաշխարհային տնտեսության դրական զարգացումների, ամբողջական պահանջարկի վերականգնման, ինչպես նաեւ 2010 թ. ապրիլից հիմնական կոմունալ ծառայությունների սակագների թանկացման ազդեցությամբ գնաճային միջավայրը կանխատեսվող հորիզոնում կպահպանվի, թեեւ 12-ամսյա գնաճի տեմպերը կշարունակեն նվազել:**

**Խորհուրդը գնահատում է, որ մակրոտնտեսական վերոնշյալ հեռանկարում դրամավարկային պայմանների խստացումը պետք է շարունակվի ավելի դանդաղ տեմպերով՝ նպատակ ունենալով ձեւավորել եւ պահպանել դրական իրական տոկոսադրույքներ կանխատեսվող ողջ ժամանակահատվածի ընթացքում՝ միաժամանակ շարունակելով մեծ ուշադրություն հատկացնել իրացվելիության կառավարման խնդրին:**

**Խորհուրդը որոշեց բարձրացնել ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ սահմանելով այն 7.25%: Ներգրավված ավանդների եւ լոմբարդային ռեպոների տոկոսադրույքները սահմանվեցին համապատասխանաբար 4.25% եւ 12.25%:**

***ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն***

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 21.05.2010, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: